Azg
ԱԶԳ
13 ՅՈՒՆԻՍ 2008 ՈՒՐԲԱԹ 112 (4006)

Արցախում 550 զույգ կամուսնանա նույն օրը

Սեպտեմբերին Արցախում կանցկացվի անհատական «Կոլեկտիվ հարսանիք», որը նախաձեռնել է մոսկվաբնակ հայտնի բարեգործ Լեւոն Հայրապետյանը: Ինչպես ասում է բարեգործը, նպատակը ժողովրդագրական աճ ապահովելն է. «Արցախում պետք է ժողովրդագրական «պայթյուն» լինի: Պետք է բնակչության թիվը հասցնել 300 000-ի, իսկ դրա համար պիտի օգնենք երիտասարդ ընտանիքներին սոցիալական ծրագրերով: Այս հարսանիքը ավանդական կդառնա: Ամեն մի ամուսնացող զույգի կնեհայրը կդառնա մեկ բարեգործ, որը հետագա ամբողջ կյանքում ապավեն կլինի նրանց»: Բարեգործի խոսքերով, ծնելիության խթանման համար առաջին երեխայի համար կհատկացվի 2000, երկրորդի՝ 3000, երրորդի՝ 5000, չորրորդի՝ 10 000, հինգերորդի՝ 20 000, վեցերորդի՝ 50 000, իսկ յոթերորդի՝ 100 000 ԱՄՆ դոլար: «Կոլեկտիվ հարսանիքի» օրը նորապսակների համար նախատեսված է նաեւ մեծ համերգ: Հարսանիքին մասնակցելու համար առայժմ գրանցվել են 550 զույգ, հաղորդում է «Դե Ֆակտո» գործակալությունը:

Գյումրին՝ մշակութային եւ կրթական կենտրոն տարածաշրջանում

Այս նպատակին հասնելու մասին հայտարարեց վարչապետ Տիգրան Սարգսյանը կառավարության արտագնա նիստի ժամանակ

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հայաստանի կառավարության հերթական նիստը երեկ տեղի ունեցավ Գյումրիում: Մինչ առաջին արտագնա նիստի օրակարգին անցնելը, վարչապետ **Տիգրան Սարգսյանը** անդրադարձավ արտագնա նիստի հրավիրման նպատակին: Նա պատմական համարեց փաստը, որ Հայաստանի կառավարությունն ամբողջական կազմով առաջին անգամ արտագնա նիստ է անցկացնում եւ հայտնեց, որ այստեղ արտագնա նիստեր կանցկացվեն մարզերում: «Սա բացառիկ հնարավորություն է, որպեսզի ծրագրային գերատեսչությունները նախապատրաստեն իրենց օրակարգն այնպես, որ բացահայտեն մարզերում կուտակված խնդիրները, անելիքները եւ հեռանկարային ծրագրերը», պարզաբանեց վարչապետը:



Տիգրան Սարգսյանը պատահական չհամարեց, որ առաջին արտագնա նիստն անց է կացվում Գյումրիում, հանի որ Գյումրիում եւ Շիրակի մարզում «կուտակված խնդիրները բազմազան են, անելիքները՝ շատ»: Շարունակելով վարչապետն ընդգծեց, որ «թիվ մեկ խնդիրը, որ իրենք՝ մարզի բնակիչները, արձանագրում են, աշխատատեղերի ստեղծման անհրաժեշտությունն է, ընդ որում՝ այս պահանջը, որ ներկայացնում են եւ գյումրեցիները, եւ մարզի բնակիչները, մի հանի անգամ գերազանցում է մնացած այլ պահանջները: Ամեն երկրորդ ընտանիք մարզում ունի արտագնա աշխատողներ: Հասկանալի է, որ արտագնա աշխատանքների շնորհիվ հնարավորություն է եղել գոյատեւելու այս դժվար տարիների ընթացքում: Եվ եթե մենք կարողանանք ապահովել նոր աշխատատեղերի ստեղծում մարզում, ապա այստեղ էապես կբարելավվի նաեւ բարյահոգեբանական մթնոլորտը»: Տիգրան Սարգսյանը հետաքրքրական համարեց, որ «մարզի բնակիչների ծգտումը դեպի կրթություն եւ գիտելիք ավելի բարձր է, քան այլ մարզերում»

Տես էջ 3

ԱՐՑԱԽ

«Շուշին պետք է դառնա ԼՂՀ երկրորդ մայրաքաղաքը»

«Դե Ֆակտո» գործակալությունը հաղորդում է, որ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը ոռասատանաբնակ հայտնի բարեգործ Լեւոն Հայրապետյանի հետ այցելել է Շուշի քաղաք՝ ծանոթանալու մի շարք օբյեկտների շինարարական աշխատանքների ընթացքին: Տեղում անցկացվել է խորհրդակցություն, որին ներկա էր Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսյանը, ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանը, պատասխանատու այլ անձինք: Քննարկվել են Շուշի քաղաքի վերանորոգման ու զարգացման հարցեր: «Մենք պետք է վերականգնենք Շուշին պահպանելով իր պատմական դեմքը:

Շուշին պետք է դառնա ԼՂՀ երկրորդ մայրաքաղաքը, ինչպես Սանկտ Պետերբուրգն է ՌԴ համար», նշել է Լ. Հայրապետյանը եւ ավելացրել, որ միջոցները չի խնայի Շուշին ժամանակակից մշակութային եւ զբոսաշրջության կենտրոն դարձնելու համար. «Եթե ընտանիքիդ համար գնումներ ես կատարում՝ չես խնայում, ինչպես այդպես էլ, երբ ես մի բան եմ կառուցում, չեմ մտածում, թե ինչքան պիտի նախսեմ՝ 100 մլն, 200, թե 300: Կարեւորը Արցախում կյանքի համար նորմալ պայմաններ ստեղծելն է», ասել է հայտնի բարեգործը:

Մեկը արդարացվեց, 5-ը դատապարտվեց, որոնցից 3-ը՝ պայմանական

Երեւանի քրեական դատարանը եւ Կենտրոն ու Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը կայացրել են մի հանի որոշումներ մարտի մեկի իրադարձությունների կապակցությամբ: Մասնավորապես Նորիկ Ռազմիկի Հարությունյանը մեղավոր է ճանաչվել քրեական օրենսգրքի «ՀանգՎածային անկարգություններ» հոդվածով եւ դատապարտվել է ազատազրկման՝ 2 տարի ժամկետով: Նույն դատարանի որոշմամբ Նվեր Մայիսի Սարգսյանը քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով՝ «Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը» առաջադրված մեղադրանքում ճանաչվել է անմեղ եւ արդարացվել: Ն. Սարգսյանը դատական նիստերի դահլիճից ազատ է արձակվել: Իսկ Երեւանի քրեական դատարանը, արագացված դատաքննության կարգով քննելով քրեական գործը, Էդվարդ Աբուդյանին մեղավոր է ճանաչել եւ դատապարտել ազատազրկման 3 տարի ժամկետով: Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը, քննելով քրեական գործերը, Մասիս Այվազյանին, Հովհաննես Ղազարյանին, Դավիթ Աբրահամյանին մեղավոր է ճանաչել քրեական օրենսգրքի «Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրել» հոդվածով եւ նրանցից յուրաքանչյուրին դատապարտել՝ համապատասխանաբար 1 տարի 6 ամիս,1 տարի, 1 տարի 6 ամիս ժամկետներով ազատազրկման: Դատարանը քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով վերոհիշյալ անձանց նկատմամբ նշանակված պատիժները պայմանականորեն չի կիրառել՝ յուրաքանչյուրի համար սահմանելով փորձաշրջան 2 տարի ժամկետով:

Քաղաքաքեսարանը մերժեց հանրահավաքը

Հունիսի 20-ին Երեւանում յոթաժամյա հանրահավաք անցկացնելու Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմնակիցների դիմումը քաղաքաքեսարանը մերժել է: Ընդդիմության կողմնակիցները հայտարարել են, որ նորից են հայտ ներկայացնելու, իսկ մերժումը կբողոքարկեն դատարանում:

Հայաստան կժամանեն ԵԽԽՎ Հայաստանի հարցով համազեկուցողները

Հունիսի 16-17-ը Հայաստան կժամանեն ԵԽԽՎ Հայաստանի պարտավորությունների կատարման հարցով համազեկուցողներ Ժորժ Կոլոմբիեն (Ֆրանսիա) եւ Ջոն Պրեսկոտը (Միացյալ Թագավորություն)՝ գնահատելու Հայաստանի ժողովրդավարական հաստատությունների գործունեության վերաբերյալ ԵԽԽՎ 1609 բանաձեւի իրականացումը: Ըստ ԵԽԽՎ մամուլի ծառայության, համազեկուցողները հանդիպումներ կունենան նախագահ Սերժ Սարգսյանի, Ազգային ժողովի նախագահ Տիգրան Թորոսյանի, կառավարող կոալիցիայի եւ ընդդիմության մաս կազմող քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների, արտախորհրդարանական ընդդիմության ներկայացուցիչների, այդ թվում՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի, ՀՀ նախագահին կից ստեղծված ԵԽԽՎ 1609 բանաձեւի իրականացման համակարգման աշխատանքային խմբի, ընտրական օրենսգրքի բարեփոխումները մշակող խորհրդարանական աշխատանքային խմբի, կալանավորված ընդդիմադիր ակտիվիստների փաստաբանների եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Նշվում է, որ եթե համազեկուցողները եզրակացնեն, որ իրականացված առաջընթացն անբավարար է, վեհաժողովը հունիսի 25-ին իր ամառային նստաշրջանում կարող է արտահերթ կարգով Հայաստանում ժողովրդավարական հաստատությունների գործունեության վերաբերյալ քննարկում ծավալել:

«Ազգ»-ի վաղվա հասարակաքաղաքական հավելվածում

Քաղաքագիտության դոկտոր Լեւոն Շիրինյանի «Փակուղի կամ մի հանի որոշումներ մարտի մեկի հետ» հոդվածում՝ «Հանրապետության ուժեղացման ուղու վրա», խաչատուր Աղամյանի «Իշխանության ժառանգականությունը եւ անվտանգության համակարգը» հրապարակումները՝ արդի քաղաքական առաջնահերթությունների մասին:

Ակադեմիկոս Արման Գալոյանն անբուժելի համարվող հիվանդությունների բուժման նոր դեղամիջոցների ներդրման վերաբերյալ առաջարկներ է անում:

Ռիչարդ Կիրակոսյանն անդրադարձ է անում Թուրքիայի ռազմավարական արդի կողմնորոշումներին:

Կարդացեք նաեւ Դավիթ Միքայելյանի «Մորմոնների ուրվականը երգում է աշխարհում» հրապարակումը, Բեյրութի «Ազդակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Շահան Կանդահարյանի հետ «Ազգի» թղթակցի հարցազրույցը եւ այլ նյութեր:

Մ. Խ.

Հագադուլ «Երեւան-կենտրոն» քրեակատարողական հիմնարկում

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության մամուլի ծառայությունից հաղորդում են, որ «Երեւան-կենտրոն» քրեակատարողական հիմնարկում նախնական կալանքում գտնվող Գուրգեն Եղիազարյանը հունիսի 12-ի առավոտյան դիմում է ներկայացրել հիմնարկի պետին՝ նշելով, որ սկսում է անժամկետ հացադուլ: Քրեակատարողական հիմնարկի ղեկավարությունն իրականացրել է սահմանված բոլոր միջոցառումները: Գուրգեն Եղիազարյանը գտնվում է բժիշկների մշտական հսկողության տակ: Առողջական վիճակը գնահատվում է բավարար:

Արտահերթ նստաշրջան հունիսի 16-ին

Երկուշաբթի օրը կհրավիրվի ՀՀ Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան՝ մարտի 1-ի դեպքերի հետաքննության հանձնաժողովի ստեղծման հարցով:

Ղեղիայի խորհրդարանը չճանաչեց 1915-ի ցեղասպանությունը

Հիմնականը վա՞խն է թուրք ծայրահեղականներից

Հունիսի 12-ին Ղեղիայի խորհրդարանը 245 ձայնից միայն 37 կողմ է արձանագրել 1915 թվականին Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւին: Ինչպես տեղեկացնում է Ղեղիայի հայկական ասոցիացիաների միության նախագահ, «Արմենիկա.օրգ» էջի գլխավոր խմբագիր **Վահագն Ավետյանը**, քվեարկության նախորդ օրը ղեղական խորհրդարանում երկար քննարկումներ են եղել խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի՝ մարդու իրավունքներին առնչվող զեկույցների կապակցությամբ՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու կոչով:

Ցեղասպանության ճանաչման բանաձեւի մերժման հիմնավորումներն արդեն իսկ քվեարկության նախօրեին ձեւակերպվում են 4 կետով: Մասնավորապես, Ղեղիայի որոշ քաղաքական ուժեր բանաձեւը չընդունելու փաստարկներից մեկն են համարում ՄԱԿ-ի կողմից Հայկական հարցի առնչությամբ որեւէ փաստաթղթի ընդունված չլինելու հանգամանքը:

Երկրորդ փաստարկը 1948 թվականին ՄԱԿ-ի համապատասխան բանաձեւի ընդունման ժամանակ գոյություն չուներ Օսմանյան կայսրությունը, այլապես կարող էր ցեղասպանություն գնահատվել քաղդեացիների, ասորիների, հայերի հետ տեղի ունեցածը: Երրորդ փաստարկով նշվում է, թե դեռեւս առկա է տարաձայնություն Օսմանյան կայսրության փլուզման տարբեր իրադարձությունների եւ ուղղությունների առնչությամբ:

Վերջին փաստարկը ընդդեմ բանաձեւի ընդունման, վերաբերում է Թուրքիայում ներկա իրավիճակին ու զարգացումներին այն մոտեցմամբ, թե նման բանաձեւը կարող է դրդել ազգային որոշ նրբին գործընթացներ, ինչն էլ կարող է բերել ծայրահեղականների գործողությունների:

Ինչեւէ, մինչեւ քվեարկությունը, քննարկմանը Ջախ ուժերը ներկայացնող խորհրդարանական Հանս Լինդը երեք հարց է առաջադրել ի հակադրություն նշված «փաստարկների». ովքե՞ր են այն հետազոտողները, որ չեն համաձայնում 1915 թվականի իրողություններին, եթե 1948 թվականի ՄԱԿ-ի բանաձեւով չի կարելի ճանաչել Հայոց ցեղասպանությունը, ինչո՞ւ է ճանաչվում Հոլոքոսը, եւ ինչո՞ւ պետք է վախը Թուրքիայի նեղսի ծայրահեղականներից թելադրի խոսքի ազատությունը ղեղական խորհրդարանում: Բանաձեւը մերժելուց կողմ արտահայտվողներից ոչ մեկը պատասխան չի տվել:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Ամեն ինչ կանեմ սիյուռֆի ներուժը համաժողովրդական շարժման աջակցությանն ուղղելու համար»

Իր տեսակետները ներկայացրեց Ժիրայր Սեֆիլյանը

«Արցախի տարածային մոտեցումների հարցում մենք ունենք տարաձայնություններ Լեռնային Տեր-Պետրոսյանի հետ: Միաժամանակ գտնում ենք, որ այդ մարդը Արցախ ներխուժող չէ: Բանակցային մոտեցումներում եթե զիջման ինչ-որ էլեմենտներ կան, դա չի նշանակում, որ նա Արցախն է ծախում: Այդ մարդը երբեք չի ասել, որ Ղարաբաղը պետք է մնա Ադրբեջանի կազմում: Բայց հակառակորդը լկտիաբար ասում է, որ Լեռնը Արցախը ծախում է», երեկ «Ուրբաթում» «Ազգի» հետ զրույցում ասաց Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատար **Ժիրայր Սեֆիլյանը**:

Իսկ «**Ազգի**» այն հարցին, թե ինչպե՞ս եղավ, որ Շուշիի ազատամարտիկ հերոսը որոշեց պատգամավոր դառնալ Լեռնային Տեր-Պետրոսյանին, երբ Ղարաբաղի գրավյալ տարածքների հարցում տարբեր գաղափարական մոտեցումներ են ունեցել, Սեֆիլյանը փորձեց այսպես պատասխանել. «Կարող եմ ասել, որ ձեւավորված համաժողովրդական շարժման խնդիրը Լեռնին նախագահ բերելու մեջ չէ: Առիթ մենք պետականության կորուստ ունենք. վերականգնման խնդիր ունենք. այսօր ավելի ախորները մարելու հարցն է, որի մեջ արցախյան հարցը չի մտնում: Նախ եկեք վերականգնենք դասական համակարգը, իրավական համակարգը: Առաջին խնդիրը ընդդիմության ձեւավորման մեջ դա է: Ինչ վերաբերում է տարաձայնություններին, արա առողջ մթնոլորտում կբանավիճենք Լեռնի հետ, այսօր դա հնարավոր չէ: Պետականության մասին պետք է մտածել, պայմաններ պետք է լինեն, որից հետո մենք մեր հանակիրները, մեր ժողովրդով Լեռնին կդարձրնենք մեր արբերակը»:

Հունիսի 9-ին բանից ազատ արձակված Ժիրայր Սեֆիլյանը երեկ իր առաջին ասուլիսն էր տալիս: Նախ եւ առաջ հավաքվածները ծափողջույններով դիմավորեցին Արցախի հերոսին: Սեֆիլյանը հայտնեց, որ իր հանդեպ արդարի իրականացված մեկուկես տարվա պատժամեխեցը քաղաքական հետաքրքրություն է: Նաեւ նշեց, որ բոլոր նրանք, ովքեր հրահանգել են, իրականացրել են այդ արդարությունը պատասխանատվության են ենթարկվելու. «Ոչ ասում եմ, թե պետք է պատասխան տան այդ բոլորը՝ պատվիրատուից մինչեւ ամենափոքր չինովնիկը, ես չեմ ասում որոնես անձնապես վիրավորված կամ վրեժխնդրության զգացողություն ունեցող: Տարիներ ի վեր ես վրեժխնդրության զգացողությունից ազատվել եմ, որովհետեւ դա մարդուն միայն թուլացնում է: Այդ զգացումները բոլորն իմ մոտ կան, մեր գործի հետ ովքեր ինչ առնչություն են ունեցել: Եվ գալու է օր, որ բոլորը օրենքի առաջ պատասխան են տալու»:

Հարցին, թե ինչ կանի Սեֆիլյանը, եթե գործընթացը վերսկսվի եւ իրեն արտախսեն Հայաստանից, պատասխանեց, որ եթե բոլորի կերպով նստեցնեն օդանավ եւ արտախսեն, արա ինքը սփյուռքում կարճ ժամանակ գտնվելու պահը կօգտագործի հայ համայնքներում Հայաստանի մասին իրազեկելու, առկա իրավիճակի մասին ճշմարիտ տեղեկություն տալու համար: Ամեն ինչ կանի սփյուռքի ներուժը հայրենիք համաժողովրդական շարժման աջակցությանն ուղղելու համար: Սեֆիլյանը ընդգծեց, որ ինքը խոսում է արտախսման դեպքում սփյուռքում կարճ ժամանակ մնալու մասին, քանի որ ինքը չի պատրաստվում հեռանալ հայրենիքից, եւ եթե իրեն դռնից հանեն, արա ինքը պատուհանից կմտնի:

Սեֆիլյանի խոսքով, եթե մարտի 1-ին ընդդիմության ղեկավարը ժողովրդին կոչ աներ ալիք բարձրացնել եւ արբել իշխանությանը, արա կասկած պետք չէ ունենալ, որ հենց այդպես էլ կլիներ, քանի որ մեծ բազմություն էր հավաքված Ֆրանսիայի դեսպանատան մոտ եւ այդ մարդիկ վճռական էին. «Այդ օրը հնարավոր էր իշխանափոխություն կատարել, բայց դրա գինը շատ թանկ էինք վճարելու: 10 զոհի փոխարեն կունենայինք 110 զոհ»:

Սեֆիլյանը անդրադարձավ նաեւ հայկական բանակի ներկայիս բարոյահոգեբանական վիճակին եւ նշեց, որ տասը տարուց ավելի իր վերաբերմունքը բացասական է եւ կաղ չունի իր ազատազրկման, քաղաքական հայացքների հետ. «Այն, որ ձերբակալում են ազատամարտիկներին, անկասկած ազդում է հայ զինվորի բարոյահոգեբանական վիճակի վրա»:

«**Ազգի**» այն հարցին, թե ինչպե՞ս կմեկնաբանի Սեֆիլյանը Տեր-Պետրոսյանի այն քայլը, որ դրսեւորվեց ապրիլի 24-ին Օիթեռնակաբերդում հանրահավաքի ձեւով, փորձեց այսպես պատասխանել. «Քանի որ ապրիլի 24-ը զուգադիպեց հետմարտիմեկյան ժամանակահատվածին, ժողովրդի մեջ ազատ քայլի, ազատ խոսքի դրսեւորման մղում կար. ես դրա մեջ խտրականություն չեմ դնում, ժողովրդի երկու մասի բաժանում չեմ տեսնում, ես դրա մեջ բացասական արդյունք չեմ տեսնում»:

Անդրադառնալով նաեւ «Առաքի» ջոկատի անհետ կորածների խնդրին՝ Սեֆիլյանը ներկայացրեց իր կարծիքը. «Ես կարծում եմ, հնարավորություն կա վերաբերում կազմակերպելու. շատ ցավալի էր այդ լուրը: Նախաձեռնություն պետք է անցկացվի եւ այդ օրերի մարտակերպության ճակատի հրամանատարությունը պետք է պատասխան տա. ովքեր եղել են ղեկավարները, պետք է պատասխան տան: Ամիկարությունը, որ դրսեւորվեց այդ ժամանակ աջ թեւում, ես էլ եմ մասնակցել այդ մարտին, ձախ թեւում, Մարակերտի շրջանը 3 օրվա մեջ հանձնել են թուրքին, եւ ոչ մի ղեկավար պատասխանատվության չենթարկվեց: Այսօր էլ ուշ չէ, իմ կարծիքով, պատասխանատվության ենթարկել մեղավորներին»:

ՆԱԻԲԻ ՄՈՒՐՈՒՂՅԱՆ

ՍԿԱՆԴԱԼ ՊԱՏՄՈՒՄ

Հնագույն տոների, ծեսերի վերարթնացման փորձ

Ամանորը՝ հունիսի 14-ին

Տոմարագետ, Վիկտոր Համբարձումյանի տունթանգարանի տնօրեն **Գեւորգ Բրուտյանը** եւ իր համախոհները փորձում են ազգային պետական օրացույցը, ազգային ծես-ծիսակարգերը, տոները, ավանդույթները վերարթնացնել ու պահպանել, արդի մտածողությամբ դրանք մեկնաբանել, ինչն, իրոք, յուրօրինակ է: Ի թիվս դրանց, նաեւ Ամանորը, վաղուց արդեն հայերիս մոտ արմատացած հունվարի 1-ը, ըստ տոմարագետի, մեր ավանդական տարեմուտի տոնի հետ առնչություն չունի եւ փոխառված է հռոմեական օրացույցից: Հայերը հնում Նոր տարին նշել են ամեն տարվա ամառային արեւադարձից մեկ շաբաթ առաջ ընկած օրը՝ հունիսի 14-ին: Մեր նախնիներն այդ օրը ճշտել են որոշակի աստղի դիտումով՝ արեգակնային համբարձումներով, որ ճշգրիտ չափման միջոց է եղել: Այսօր այդ եղանակով հնարավոր չէ պարզել՝ աստղի դիրքի փոփոխության պատճառով: Հին հայերի նավասարդյան ամանորը, որ օգոստոսի 11-ին է համապատասխանեցվել, XII դարում ընդունել է տոմարագետ Հովհ. Սարկավագը՝ որոշակի նպատակով ծիսակարգային անշարժ օրացույցի համար որոնելով հիմք համարելով հռոմեական օգոստոսի 11-ը: Հայկական ավանդական ամանորը յոթնօրյա բացօթյա տոնակատարությամբ տեղի է ունեցել Նպատ լեռան սոռոտում՝ արքունիքի, աշխարհազորի ներկայությամբ: Տոնի գլխավոր ծիսական արարողությունը լեռան գագաթին մեկամյա կենդանու զոհաբերությունն է եղել (հիմնականում՝ եղջերու) եւ ծիսական կերակուր եփելը (զոհաբերած կենդանու մսով հարիսա): Հեթանոս հայերի ամանորյա այս տոնակատարությունը շարունակվել է նաեւ քրիստոնեության վաղ շրջանում:

Անցյալ տարի հայերի ակումբները որոնողների մի խումբ առաջին փորձն է արել՝ Ամանորը հունիսի 14-ին նշելու, որը կատարվել է Հայաստանի ամենաբարձր տարի՝ Արագածի գագաթամերձ լճի մոտ:

Գեւորգ Բրուտյանը եւ իր ընկերներն այս տարի այդ փորձը կրկնելու են շաբաթ օրը. մեկնելու են դրամատիկական քառոտնի շենի մոտից, ժամը 9-ին: Այս մասին ծանուցի ասուլիսին երեկ «Տեսակետ» ակումբում ասաց տոմարագետը:

Մեհանում աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանի 100-ամյակը լրանում է այս տարի: Գ. Բրուտյանը նկատեց, որ քանգարանի շենքը, որտեղ 46 տարի աշխատել է գիտնականը, վթարային է, գիտնականի արխիվն առայժմ ուսումնասիրված-հետազոտված չէ, որի հիմնական պատճառը հասարակությունն է: Նույն վիճակում է նաեւ գիտնականի հոր, նշանավոր բանաստեղծ, թարգմանիչ Համազասպ Համբարձումյանի արխիվը:

Մ. Թ.

«Ով ուշադրություն է դարձրել, ով բռնացրել է կեղծիքը, նա էլ դատվել է», հայտարարում է Ռուզան Խաչատրյանը

«Դատարանի դահլիճում, անգամ նախաքննության ժամանակ խնդրում են, ասում են մենակ մի բան՝ կդատեմ, ինչ տուն կուղարկեմ, մենակ չխոսես: Չխոսելը նշանակում է մեղքը ընդունել: Դա փիլիսոփայական մոտեցում ա: Ու շատերը չեն խոսում, շատերի ներվերն էլ չեն դիմանում, հետո խոսում են», երեկ այսպես ներկայացրեց ընդդիմադիր հայացքներ ունեցող ձերբակալվածներից իրավապահների սպասելիքները փաստաբան **Տ. Տեր-Եսայանը** ՀԺԿ գրասենյակում հրավիրած ժամլո ասուլիսին: Ասուլիսի նպատակն էր Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում վաղը կարդացվելիք դատավճռից օր առաջ մեկնաբանել դատավարությունը, որ ընդդիմադիր թեւին հածակարծիք ծանուցով բազմիցս արարվել է: Հիշեցնենք, որ «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցության նախագահ Պետրոս Մակեյանի, Գյումրիի ոգեվարական ուսիկանության նախկին պետ Լուսս Ջաքարյանի, ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի վստահված անձ Հրաչ Սաղաթելյանի դատավարությունը, բանախոսի կարծիքով, որ նաեւ վերոհիշյալ անձանց փաստաբանն է եղել (նրանք հրաժարվել են փաստաբաններից ի նշան դատավարության դեմ բողոքի), նույն սցենարով է նախաձեռնվել եւ իրականացվել, ինչ մնացյալները, որոնք որակվում են որպես քաղաքական հետաքննություններ եւ հաշվեհարդար այլակարծության համար: «Եթե ճիշտն ես ուզում իմանալ, ես ենթադրում եմ, որ էդ տարաձայնությունը (Շիրակ-Ս. Մ.) Սերժ Սարգսյանի ընտրարշավը տաս վաս են տարել եւ էդ տարը իր վաս ախխաանը ձեւակերպել, աղմուկ է բարձրացրել, որ էստեղ գալիս են, ծեծում են, ջարդում են, դրա համար սենց-սենց բան ա ...»: «**Ազգի**» հարցադրմանը, թե կոնկրետ փաստեր ունե՞ք, բանախոսը պատասխանեց. «Կոնկրետը նա է, որ իրանք հրում են անում դատախազությանը»: «Մի բան էլ ավելացնեմ, միջամտեց ՀԺԿ ժամլո խորհրդի **Ռուզան Խաչատրյանը**, եղել են բազմաթիվ բողոքներ ընտրության օրը՝ կոտրված տարաթերներից, որ առեւանգվել են վստահված անձիք եւ այլն, դատախազությունը որեւէ կերպ չի արձագանքել, իրական գործեր չեն հարուցվել, կան կոնկրետ անուններ, պատգամավոր են առեւանգել եւ այլն: Իսկ էստեղ չես հասկանում որտեղից է ահազանգը եղել, եւ էստես մեծ իրական գործ է բացվել»:

«Այս եւ մի շարք գործերով մարդիկ դատվում են իրենց գործողությունների, քաղաքական հայացքների համար, հանդգնված է Տ. Տեր-Եսայանը: 2003 թվականից սկսվել է քաղաքական հետաքննությունը: Հետաքննվել է ընտանիքով, հայացքների համար՝ կանչել, պատժել, հեռացնել ... Հետաքննվածների 37 գործ Եվրոդատարանում է, հազարավոր մարդիկ են բերման ենթարկվել մարտի 1-ից առ այսօր՝ տարբեր կարգավիճակով, հետո բաց են թողել, բաց թողելուց հետո էլի անվերջ կանչում են, տանում են, բերում են: Հիմա դուք որոշեք, դրանք հաղթանակներ են, թե՞ չեն»:

Բանախոսը չնայած գրվեստի խոսքեր շռայլեց «համարյա իրավաբան» լրագրողներիս, այնուամենայնիվ, ինքնիրեն հարց տվեց եւ ինքն էլ պատասխանեց. «Ինչն է պատճառը, որ ուզում են այս գործով անպայման դատավճիռ դուրս գա: Ասեմ: Առաջին օրը, որ խոսք գնաց, ես ասի՝ պարոն Մակեյանին բաց չեն թողնի: Ինչո՞ւ: Որովհետեւ չարաբաստիկ փետրվարի 24-ի որոշման մեջ Մակեյանը որպես պարագլուխ է անցնում: Ճիշտ հասկացեք: Մակեյանին անհնար էր բաց թողնել, որովհետեւ իրենք իրենց կիսեին: Սա է խնդիրը: Այստեղ կա մի նրբություն: Դատում են, որովհետեւ շատ բան խոսում, հաստատ չէ», եզրակացրեց փաստաբանը:

«Սա առաջին դեպքը չէ, մեր բոլոր վստահված անձիք, ով ուշադրություն է դարձրել, բացահայտել է կեղծիքը, նա էլ դատվել է», պարզաբանեց Ռուզան Խաչատրյանը եւ բերեց Գավառի օրինակը, երբ յոթ հանցաժողովի յոթ անձանց ստորագրություն կեղծած հանցաժողովի նախագահը պայմանական մեկ տարի է ստացել, իսկ երկու վստահված անձիք ստացան երեխական տարի:

Իր դիտարկությունը իրավիճակի եւ մթնոլորտի մասին հայտնեց եւ Տ. Տեր-Եսայանը: «Մի օր չէ, երկու օր չէ, ինչ է նշանակում մարդուն տանես, ամիսներով պահես, ազատությունից զրկես, հետո հարազատներին բերման ենթարկես, հարցնես՝ էս մեքելի սանոկը ձեզ որտեղի՞ց», հարցնում է փաստաբանը:

Տ. Տեր-Եսայանը ողջունելի որակեց, որ քաղաքական գործիչները իրենց հայացքների համար պատրաստ են «նստելու, դուրս գալու»: «Հետագայում պատճառներ զբաղեցնելու», նրա միտքը շարունակեց լրագրողներից մեկը:

ՍՈՌՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության մեջ է սկսած
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Հեռ. 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱՎՈՒՇ ԱՎԵՏԻՍՅԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՒՅՐ ՅԱՎՈՐՅԱՆ / հեռ. 529221
Գլխավոր խմբագրի տեղակալ / հեռ. 582960
Լուսանկարների սեղանակ / հեռ. 581841
Գեղարվեստական խմբագրություն / հեռ. 582483
Հասցեագրված լուսանկարների խմբագրություն / հեռ. 529353
Գեղարվեստական շտաբագրություն
«Ազգ» թերթի
Թերթի նիթերի ամբողջական թե մասնակի արտադրումները տրամիր ժամուն միջոցով կամ ռադիոհեռարձակությունը առանց խմբագրության գրաւոր հաստատության խոսքի արգելում են հանձայն ՀՀ հեղինակային իրավունքի մասին օրենքի
Նյութերը չեն գրախօսում ու չեն վերադարձնում
Գ տարով յուրաքանչյուր գովազդային են, որոնց բովանդակության համար խմբագրությունը պատասխանատուություն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Գյումրին՝ մշակութային եւ կրթական կենտրոն տարածաշրջանում

1-ին էջից

«Կարծում եմ՝ այն նոյասակը, որ ամրագրված է կառավարության ծրագրում՝ մարզերի եւ տարածքների հավասարաչափ զարգացումը, եթե մենք խոսխոսենք մշակույթի եւ կրթության ծրագրերի իրականացումը մարզում, Գյումրին կդառնա մշակութային եւ կրթական կենտրոն տարածաշրջանում: Հաշվի առնելով սոցիալական հաջողությունները, որ կան մարզում, առաջնահերթություններից մեկը լինելու է նաեւ Գյումրին սոցիալական կենտրոն դարձնելը Հայաստանում», բացման խոսքն այսպես ամփոփեց վարչապետը:

2009-ին 50-ից ավելի շենքեր՝ աղետի գոտում եւ 3 հազար բնակարան՝ միայն Գյումրիում

Օտարազգի հարցերի քննարկումն ավարտելուց հետո վարչապետ Տիգրան Սարգսյանն ամփոփեց արագաճ նիստը, նշելով, որ «ընդունվել են մասնաբաժնային, լրացուցիչ ոլորտային միջոցառումների ծրագիր: Հայեցակարգի նոյասակը նախկինում ընդունված որոշումների համաձայն, իրականացված բնակարանային ապահովման ծրագրերի վերականգնողական աշխատանքների վերլուծության արդյունքներով ոլորտական հաղթահարման սկզբունքների ձեւավորումն է՝ ուղղված երկրաշարժից 20 տարի անց դեռեւս անօթեւանի կարգավիճակում գտնվող անձանց բնակարանային խնդիրների լուծմանը մինչեւ 2013-ը:

Մեկ այլ որոշմամբ կառավարությունը 2008-ի իր պահուստային ֆոնդից 500 մլն դրամ է հատկացրել հաղթահարման նախարարությանը՝ երկրաշարժի հետեւանքով անօթեւան մնացած Գյումրի քաղաքի՝ 47, Վանաձոր քաղաքի՝ 30, Ստեփանավան քաղաքի՝ 11, Դիլիջան քաղաքի՝ 13 անձանց բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով ֆինանսական աջակցությամբ բնակարանային խնդիրները լուծելու նոյասակով:

Ինչպես է վերականգնվելու Գյումրու ոչսմամբակութային միջավայրը

Ելնելով Գյումրի քաղաքի ճարտարապետական ու ոչսմամբակութային միջավայրի պահպանման եւ քաղաքաշինական վերականգնման խնդիրների լուծման անհրաժեշտությունից, կառավարությունը հաստատեց Գյումրի քաղաքի ոչսմամբակութային եւ քաղաքաշինական միջավայրի վերականգնման ու զարգացման (Կումայրի) ծրագրի գերակա ուղղությունները: 2008-2012 թթ. ընթացքում Գյումրիում իրականացվելիք ծրագրի առաջնահերթ գերակա ուղղություններ են խարարին, Շիրակի մարզպետին՝ յուրաքանչյուր տարվա արդյունքների հիման վրա, մինչեւ հաջորդ տարվա փետրվարի 25-ը ՀՀ կառավարություն ներկայացնել տեղեկանք ծրագրի իրականացման գործընթացի մասին:

Գյումրին՝ մշակութային եւ կրթական կենտրոն տարածաշրջանում

ներ, որոնք էապես խթանելու են մարզի զարգացումը»: «Խոսքը շուրջ 90 մլրդ դրամի ծրագրերի իրականացման մասին է: 77 մլրդ դրամի շինարարական աշխատանքներ պետք է ծավալվեն մոտակա տարիների ընթացքում: Եվ մենք հայտարարում ենք, որ այդ աշխատանքների շնորհիվ ամբողջովին կլուծվի մեր անօթեւան քաղաքացիների խնդիրը: Այսինքն՝ հայտարարում ենք, որ պետությունն ամբողջությամբ պատասխանատու է շուրջ 7 հազար ընտանիքների բնակարանային ապահովման համար: Մենք այս խնդիրը լուծելու ենք ձեզ հետ, մոտակա տարիների ընթացքում: Սա նշանակում է, որ 2009-ից լայն ծավալով շինարարական աշխատանքներ են կատարվելու մարզում, 50-ից ավելի բազմաբնակարան շենքեր են կառուցվելու: Միայն Գյումրի քաղաքում պետք է առնվազն 3 հազար բնակարան հանձնենք շահագործման: Սա այն խնդիրն է, որն ընկած էր հանրապետության նախագահի նախընտրական ծրագրի, ինչպես նաեւ կոալիցիոն կառավարության ծրագրի հիման», ընդգծեց վարչապետը:

«Մենք չպետք է բավարարվենք միայն մեր այսօրվա արագաճ նիստով: Այս ամիսների ընթացքում պարբերաբար նախարարներն այցելելու են Գյումրի եւ մարզային հիմնարկությունների, բոլոր շահագրգիռ կառույցների հետ քննարկելու են, թե ինչ ընթացք են ստանալու այսօրվա որոշումները: Այսօր ես հայտարարում եմ, որ նախարարների այցելությունները մարզ լինելու են պարբերական, եւ մենք խստագույնս հետեւելու ենք, որպեսզի եռամսյակային կտրվածքներով մեր ծրագրերն իրականանան», գյումրեցիներին խոստացավ Տիգրան Սարգսյանը:

Աղետի գոտու անօթեւան ընտանիքների խնդրի լուծումը մինչեւ 2013 թվականը

Գյումրիում տեղի ունեցած կառավարության արագաճ նիստի ժամանակ հավանություն տվեց աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետեւանքով անօթեւան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման հայեցակարգին եւ հայեցակարգի դրույթների կիրառմանն ապահովող միջոցառումների ծրագրին: Հայեցակարգի նոյասակը նախկինում ընդունված որոշումների համաձայն, իրականացված բնակարանային ապահովման ծրագրերի վերականգնողական աշխատանքների վերլուծության արդյունքներով ոլորտական հաղթահարման սկզբունքների ձեւավորումն է՝ ուղղված երկրաշարժից 20 տարի անց դեռեւս անօթեւանի կարգավիճակում գտնվող անձանց բնակարանային խնդիրների լուծմանը մինչեւ 2013-ը:

Մեկ այլ որոշմամբ կառավարությունը 2008-ի իր պահուստային ֆոնդից 500 մլն դրամ է հատկացրել հաղթահարման նախարարությանը՝ երկրաշարժի հետեւանքով անօթեւան մնացած Գյումրի քաղաքի՝ 47, Վանաձոր քաղաքի՝ 30, Ստեփանավան քաղաքի՝ 11, Դիլիջան քաղաքի՝ 13 անձանց բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով ֆինանսական աջակցությամբ բնակարանային խնդիրները լուծելու նոյասակով:

Ճակընդեղագործության զարգացմամբ ավելացնել շաքարի տեղական արտադրությունը

Հայաստանի Հանրապետությունում ճակնդեղագործության զարգացման հայեցակարգն ի գիտություն ընդունվեց երեկ Գյումրիում տեղի ունեցած կառավարության նիստի ժամանակ: Փաստաթղթի նոյասակն է հանրապետության պարենային հավելկետում շաքարի տեղական արտադրության ավելացման համար ճակնդեղագործության վերականգնման ծրագրային դրույթների մշակումը: Հայեցակարգի հիմնական խնդիրներն են՝ Հայաստանի մարզերում ճակնդեղագործության զարգացման հնարավորությունների բացահայտումը, հանրապետությունում ճակնդեղագործության զարգացման հիմնական ուղղությունների, անհրաժեշտ միջոցառումների ժամանակացույցի սահմանումը, ճակնդեղագործության զարգացումից ակնկալվող արդյունքների գնահատումը: Նիստում նշվեց, որ հայեցակարգը հիմք կծառայի Հայաստանում ճակնդեղագործության զարգացման պետական աջակցության ծրագրի նախագծի մշակման համար:

Գյումրին նաեւ Հայաստանի մարզական կենտրոն

Արագաճ նիստի ժամանակ կառավարությունը հաստատեց Գյումրի քաղաքը հանրապետական մարզական կենտրոն դարձնելու ծրագիրը: Ծրագիրը նոյասակ ունի նոյաստելու անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, բնակչության առողջության ամրապնդմանը, առողջ արտելակերպի ձեւավորմանը եւ ակտիվ հանգստի կազմակերպմանը, ինչպես նաեւ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասնագետների պատրաստմանը, օլիմպիական շարժման զարգացմանը, սպորտի բնագավառում միջազգային կառույցներին ինտեգրմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը: Հանձնարարվեց սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարին՝ համարվել՝ Կումայրի պատմական կենտրոնի վերազարգացումը (ռեաբիլիտացիան), անավարտ շենքերի շինարարությունը եւ հարակից տարածքների բարեկարգումը, երկրաշարժից խանդված շենքերի եւ դրանց հարող տարածքների մաքրումը, այդ թվում՝ «Շիրակ» հյուրանոցի արագնոնաժման եւ նույն տեղում մարզային գրադարանի ու Շիրակի երկրագիտական թանգարանի շենքի կառուցումը, Գյումրի քաղաքում Հայաստանի ազգային պատկերասրահի մասնաճյուղի ստեղծումը, տնակային թաղամասերի վերացումը եւ այլն:

Պետական աջակցություն Գյումրու տեխնոպարկի ստեղծմանը

Կառավարության մեկ այլ որոշմամբ երեկ հավանություն տվեց Շիրակի մարզի Գյումրի քաղաքը տեխնոքաղաք վերակառուցելու հայեցակարգին: Այն մշակվել է՝ որպես հիմք ընդունելով կառավարության ծրագրով որդեգրված քաղաքականությունն ու սահմանված ռազմավարական գերակայությունները, եւ ուղղված է Երեւանի ու մարզերի միջեւ անհամամասնությունների եւ բնակչության եկամուտների տարբերությունների կրճատմանը, գործարար միջավայրի բարելավմանը եւ Գյումրի քաղաքի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանը: Նիստում նաեւ հաստատվեց Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման պետական աջակցության 2008-ի ծրագիրը: Ծրագիր նոյասակ է խթանել Գյումրիում տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտի ընկերությունների ստեղծումն ու զարգացումը, ՏՏ մասնագիտությունների նկատմամբ ուսանողների հետաքրքրությունը, բարձրացնել ձեռներեցության մակարդակը, աջակցել գիտահետազոտական լաբորատորիաների եւ նոր ձեռնարկությունների ստեղծմանը, ինչպես նաեւ Գյումրի քաղաքում եւ, ընդհանրապես, Շիրակի մարզում զարգացման նախադրյալներ ունեցող այլ ոլորտներում ՏՏ գործիքների եւ լուծումների կիրառմանը՝ դրանց մրցունակությունը բարձրացնելու նոյասակով:

ԱՍՈՒԼԻՄ

Ինչ-որ բա՞ն է փոխվել Տեր-Պետրոսյանի ընդդիմության դաշտում

Ստեփան Դեմիրճյանի հին ասելիքը նոր արթնանգներով

«Իրավունքի դե ֆակտո» նորաբաց մամուլի սրահում երեկ հյուրընկալված ՀԺԿ ղեկավար **Ստեփան Դեմիրճյանը** գրեթե ոչ մի նոր բան չասաց ներքաղաքական իրավիճակի վերաբերյալ՝ բացառությամբ այն, որ ընդդիմադիր կուսակցություններն, անհրաժեշտության դեպքում, ընտրություններին կարող են գնալ դաշինքով: Սա համալրումն էր Ստեփան Դեմիրճյանի ավելի վաղ արտահայտված մտքի, թե իրենք ողջունում են կուսակցությունների խոշորացման գաղափարը, բայց իրատեսական չեն համարում, որ ձեւավորվի մի մեծ կուսակցություն. «Հնարավոր է, որ ձեւավորվեն մի քանի հզոր կուսակցություններ եւ անհրաժեշտության դեպքում ընտրություններին մասնակցեն դաշինքով»:

ՀԺԿ ղեկավարը լրագրողների հարցերին պատասխանելիս ոչ մի նոր բան չէր ասում: Տպավորություն էր ստեղծվում, թե հայտնի չեն ընդդիմության հետագա քայլերը հենց իրենց՝ ընդդիմադիր լիդերների համար: Անգամ չկար կրճատ պայմանի պատասխանատվության այն կեցվածքը, որը դրսեւորվում էր նախկինում: Իհարկե, սա չի նշանակում, թե կարող ենք ենթադրել, որ Լեւոն Տեր-Պետրոսյանը չունի պայմանի հետագա ծրագիր եւ անորոշության մեջ է թողել հենց իր զինակիցներին, բայց նաեւ ժամանակն է, որ Ստեփան Դեմիրճյանի հեղինակության տեր գործիչը որոշակի ասելիք ունենար գոնե երեկ՝ հաշվի առնելով, որ առջեւում հունիսի 20-ի հանրահավաքն է:

Ուշագրավ էր Ստեփան Դեմիրճյանի միտքը, թե ընդդիմությունը չարժե պայմանավորել մեկ անձով. «Ընդդիմության դաշտում կան կայացած ուժեր, որոնք համագործակցում են: Սա հասարակության պայքարն է, որը առաջնորդում են ընդդիմադիր ուժերը: Ընդդիմությունը մի անձով պայմանավորված չէ, բայց չպետք է թերագնահատել լուրջ ուժերի աջակցությունը»:

Ընդդիմության պահանջները նույնն են՝ ազատել քաղբանտարկյալներին եւ անցկացնել ազատ ու նոր ընտրություններ, ինչը միակ տարբերակն է կեղծված ընտրությունների բացասական հետեւանքները չեզոքացնելու համար: Այդուհանդերձ, իրենք կազմակերպելու են իրենց հանրահավաքը, որը, Դեմիրճյանի խոսքով, կրելու է բացառապես խաղաղ բնույթ: «Եթե իշխանություններն ազատ են արձակում քաղբանտարկյալներին, բայց չեն համաձայնում արտահերթ ընտրություններ անցկացնելու ձեր պահանջին, ի՞նչ է անելու ընդդիմությունը», «Ազգի» հարցին ակումբի հյուրը պատասխանեց. «Քաղբանտարկյալներին թող ազատեն, մնացածի մասին հետո կխոսենք, երկխոսությունը հնարավոր է այդ ժամանակ: Մենք գտնում ենք, որ ազատ, արդար ընտրությունների միջոցով է հնարավոր... Մնացածը ժամանակը ցույց կտա, այդ ժամանակ հնարավոր է երկխոսությունը»:

Ցմոռանանք ուշադրություն հրավիրել Դեմիրճյանի մեկ մտքի վրա եւս. մինչ նրա ասուլիսը ընդդիմադիր բոլոր գործիչները հայտարարում էին, թե իշխանությունները որեւէ քայլ չեն կատարում եռխով բանաձեւի պահանջները կատարելու ուղղությամբ: Մարտյան դեպքերի ուսումնասիրության համար Ազգային ժողովում ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու իրողությունը Ստեփան Դեմիրճյանը համարեց իշխանությունների կատարած կիսաքայլ՝ հավելելով սակայն, որ եռխով մյուս պահանջների՝ այդ թվում նաեւ քաղբանտարկյալների ազատ արձակման մասով առաջընթաց չկար:

Ըստ էության, ասելիքի մասով ՀԺԿ ղեկավարը նոր մտքեր չարտահայտեց, բայց պահվածքի՝ ավելի ճիշտ տրամադրվածության առումով, որոշակի փոփոխություն նկատելի էր՝ նախկին վճռականությունը չկար:

ԳՈՌԻՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Վարդգես Հովակիմյանը՝ Արարատի մարզպետ

Ինչպես տեղեկացանք կառավարական տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, երեկ Գյումրի քաղաքում տեղի ունեցած կառավարության արագաճ նիստում որոշվել է Արարատի մարզպետ նշանակել Վարդգես Հովակիմյանին:

Մինչ նշանակումը Վ. Հովակիմյանն աշխատել է ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմում՝ որպես «Մարաբ» տարածքային ստորաբաժանման ղեկավար:

Նիստում հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» ՀՀ օրենքի նախագծին, որը սահմանված կարգով կներկայացվի Ազգային ժողով: Ըստ այդ օրենքի, սփյուռքի հարցերի նախարարությունը ՀՀ կառավարության կառուցվածքում կընդգրկվի 2008-ի հոկտեմբերի 1-ից՝ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո:

Մ. Մ.

ՕՐՎԱՐԱ

Այսօր

◆Ժամը 12.00-ին «Տեսակետ» ակումբի հյուրն է ԱԺ փոխնախագահ Հրայր Կարապետյանը:

◆Ժամը 13.00-ին «Տեսակետ» ակումբում տեղի կունենա ֆուտբոլի ազգային հավաքականի մարզիչ Յան Պոուլսենի ասուլիսը:

◆Ժամը 13.00-ին ՄԱԿ «Արախորհրդարանական ընդդիմության դերը Հայաստանի քաղաքական գործընթացներում» թեմայով քննարկում:

◆Ժամը 15.00-ին «Ուրբաթ» ակումբի հյուրն է ԱԺ պետահրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, եռխով հայաստանյան պատվիրակության ղեկավար Դավիթ Հարությունյանը:

Ստորումներ Հանրային խորհրդի մասին

Արժե՞ ստեղծել...

Վերջին շրջանում թե՛ քաղաքական եւ թե՛ լրատվական դաշտում ակտիվորեն քննարկվում է իշխանություն-ընդդիմություն երկխոսության հարցը եւ որպես երկխոսության մեխանիզմ նշվում է իշխանությունների կողմից ստեղծվող Հանրային խորհրդի ինստիտուտը: Սակայն կլիցքաթափվի՞, արդյոք, Հանրային խորհուրդը ՀՀ ներքաղաքական բարդ իրավիճակը:

Նախ նշենք, որ հանրային խորհուրդներ (կամ հասարակական պալատներ) ստեղծվել են ԱՊՀ՝ կառավարման ընդգծված ավտորիտար ոճժիմներ ունեցող անդամ-երկրներում՝ Ռուսաստանում, Բելառուսում, Ղազախստանում, իսկ վերջերս դրա ստեղծման մասին սկսել են խոսել նաեւ Վրաստանում: Իսկ ինչո՞ւ են վերոնշյալ երկրներում ստեղծվել հասարակական պալատներ: Համառոտ դիտարկենք, մասնավորապես, Ռուսաստանի օրինակը: 2000-ին ընտրվելով Նախագահ՝ Վ. Պուտինը մասնանշեց իր քաղաքականությունը՝ վերահսկել երկրի հասարակական-քաղաքական ու տնտեսական կյանքի բոլոր բնագավառները: Նրան հաջողվեց հսկողության տակ վերցնել երկրի քաղաքական կյանքը եւ սանձել «ցանկալի» Պետական դումա, ինչպես նաեւ վերահսկել «տարածքների» կյանքն ու սանձել «ցանկալի» Դաշնային խորհրդի կազմ: Նույնը կատարվեց նաեւ տնտեսության բնագավառում: Մնացած միակ՝ դեռեւս անվերահսկելի բնագավառը հասարակական կյանքն էր: Նշյալ «բացը» կարգավորելու նպատակով ՌԴ այնօրյա Նախագահը նախ հսկողության տակ վերցրեց արտասահմանից ՌԴ հասարակական կազմակերպություններին ուղարկվող ֆինանսական հոսքերը, ապա օրենքով արգելեց այդ կառույցներին զբաղվել քաղաքական (մասնավորապես՝ ընտրական) գործունեությամբ եւ, որպես վերջաբան, ստեղծեց հասարակական պալատ, որը եւ ուղղորդում է երկրի հասարակական կյանքը: Ի դեմ, հասարակական պալատում չկան քաղաքական ուժեր, լինեն դրանք նախագահի նախկին թեկնածուներ, թե արտախորհրդարանական ուժեր: Լա՞վ է, թե՝ վատ... Այսպիսով, կարելի է ասել, որ ստեղծված հասարակական պալատը տեղավորվում է ՌԴ-ում ձեւավորված քաղաքական համակարգի կոնտեքստում: Իհարկե, ցանկության դեպքում կարելի է ենթադրել, որ ՌԴ նախկին նախագահին նման՝ ոչ այնքան ժողովրդավարական քայլերի համար: Սակայն չպետք է մոռանալ, որ վերջինս, բացի վերոնշյալից, շատ դրական քայլեր է կատարել ՌԴ քաղաքացիների կյանքը բարելավելու ուղղությամբ, եւ եթե ՀՀ իշխանությունները ցանկանում են ընդօրինակել Վ. Պուտինի ներքաղաքական քայլերը, ապա շատ ավելի ցանկալի կլիներ, որ սկսեին վերջինիս՝ քաղաքացիների կյանքը բարելավելու քայլերից:

Ինչ վերաբերում է ՀՀ-ում ստեղծվելիք Հանրային խորհրդի ձեւավորմանը, ապա, իշխանությունների տեսակետով, այդտեղ աշխատելու (քանավիճելու) են ոչ միայն հասարակական, այլեւ քաղաքական գործիչներ (նախագահի նախկին թեկնածուներ եւ արտախորհրդարանական ուժեր): Սա, իբր, կատարվում է հասարակությունում տիրող կարծիքներին տեղյակ լինելու նպատակով: Նախ նշենք, որ ողջ քաղաքական աշխարհում ընդունված կարգի համաձայն, քաղաքական ուժերի բանավեճ կայանում է կամ խորհրդարանում, կամ լրատվադաշտում (մամուլի ակումբներ, թերթերի էջեր ու հեռուստաալիքներ): Եվ բանավեճերի համար լրացուցիչ մարմիններ, մեր կարծիքով, ստեղծել պետք չէ: Ինչ վերաբերում է հասարակական-քաղաքական տեսակետներ ունկնդրելուն, ապա այս հարցը եւս քաղաքակիրթ աշխարհում գտել է իր լուծումը. այնտեղ գոյություն ունեն անկախ (ինչպես մեր նախկին Ա1+) եւ ընդդիմադիր հեռուստառադիոընկերություններ: Այս իսկ պատճառով նպատակահարմար չէ՞, արդյոք, Հանրային խորհրդի փոխարեն աջակցել անկախ ու ընդդիմադիր հեռուստառադիոընկերությունների բացմանը եւ նպաստել ողջ հանրաքեռությունով դրանց հեռարձակմանը:

Իսկ ընդդիմությանը պետական կառավարման համակարգում ընդգրկելու առումով նշենք, որ ժողովրդավարական երկրներում այս հարցը նույնպես գտել է իր լուծումը: Մասնավորապես չգրված կանոն է՝ քաղաքական մեկ ուժի հաղթանակի դեպքում ընդդիմադիր ուժին է հանձնվում Վերահսկիչ պալատը: Փաստենք, որ մեր քաղաքական համակարգում չի գործում նաեւ այս կանոնը: Նկատի ունենալով Վերահսկիչ պալատի նախագահի կուսակցական պատկանելությունը, կարող եմ կասկածներով վերաբերվել պալատի, ասենք, առողջապահության կամ քաղաքաշինության նախարարություններում կատարված սուգումների արդյունքներին: Այսպիսով, նպատակահարմար չէ՞ Հանրային խորհուրդ ստեղծելու փոխարեն Վերահսկիչ պալատը հանձնել ընդդիմությանը: Ինչ վերաբերում է իշխանություն-հասարակություն երկխոսությանը, ապա ժողովրդավարական երկրներում երկխոսության ինստիտուտներից են նաեւ ընտրական համակարգը եւ դասակարգային մարմինները, սակայն. 1) 1995-ից մինչեւ օրս կայացած ԱԺ եւ նախագահական ընտրությունները, բացառությամբ, երեւի, 1999-ի ԱԺ ընտրությունների, առավելապես վատ բեմականացված թատերական ներկայացումներ էին հիշեցնում. 2) չեմ հիշում որեւէ դեպք, երբ ՀՀ քաղաքացին, առավել եւս գործարար, դպրի տա ՀՀ իշխանական որեւէ մարմնի եւ շահի դասը կամ չընկնի բանտ:

Այսպիսով, առավել նպատակահարմար չէ՞ Հանրային խորհուրդ ստեղծելու փոխարեն, որը, ըստ մեզ, եվրոկառույցների մոտ իշխանությունների կողմից ավելի շատ երկխոսություն սկսելու իմիտացիոն քայլ է, աշխատեցնել ժողովրդավարական երկրներում իրենց բազմիցս ապառնացած երկխոսության վերոնշյալ ինստիտուտները: Մեր կարծիքով, եթե նշյալ ինստիտուտները աշխատեն, ապա Հանրային խորհուրդ ստեղծելու կարիք չի լինի: Ի վերջո պետք է գիտակցել, որ ՀՀ ներքաղաքական բարդ իրավիճակի պատճառը ոչ թե իշխանություն-ընդդիմություն երկխոսության բացակայությունն է, այլ՝ քաղաքացիական հասարակությանը բնորոշ ինստիտուտների գրեթե իսպառ բացակայությունը:

Հ.Գ. *Մեր կարծիքով, բացի իմիտացիայից, Հանրային խորհրդի ստեղծումը ունի նաեւ մեկ այլ նպատակ: Նախագահական ընտրություններից հետո ընդդիմադիր էլեկտորալ գրեթե ողջ (մի քանի հարյուր հազար ընտրողներից բաղկացած) դաշտը անցել է Լ. Տեր-Պետրոսյանի թիմի հսկողության տակ, կարծում եմ, ՀՀ իշխանություններին բնավ էլ դուր չի գալիս, քանի որ 2007 եւ 2008 թթ. ընտրությունները, ի վերջո, վերջինը չեն: Եվ իշխանությունները նախաձեռնելով Հանրային խորհրդի ստեղծումը, փորձելու են ազդել այս հանգամանքի վրա: Մասնավորապես ենթադրում եմ, որ Հանրային խորհրդում կընդգրկվեն «կառուցողական ընդդիմության» ներկայացուցիչները, որոնց՝ Հանրային խորհրդում հնչեցրած «բոցաբուխ» ելույթները, կարելի է չկասկածել, «ժամերով» հեռարձակելու են ՀՀ հեռուստաընկերությունները: Նպատակը՝ նոր ընդդիմության իմիտացիա ստեղծելով ընդդիմադիր էլեկտորատի մի մասին դուրս բերելն է «լեռնականների» վերահսկողությունից:*

Վերոնշյալ իմիտացիաների փոխարեն արդյոք նպատակահարմար չէ՞ երկրում ուղղակի վերականգնել վերոգրկյալ ինստիտուտների անկախանդ գործունեությունը:

Կարծում եմ, հակառակ պարագայում ժողովրդավարության առումով մեզ լավ առաջա չի սպասում:

Հետաքրքրական է, եթե Հանրային խորհուրդը իրեն չարդարացնի, հետո էլ Հասարակական պալա՞տ պետք է ստեղծվի, եւ եթե այո, քանի՞ պալատ...

Առայժմ այսքանը:

ԱՐՄԵՆ ԹԱՐԱՅԵՆ

Ինչպե՞ս գամերից ազատել «սոցիալական» պիտակով մահակը եւ խաղաղեցնել ժողովրդին

Այնպիսի քաղաքական ժամանակաշրջանում ենք հայտնվել, որ կարծես «մեր՝ հալ, ձեր՝ հալեւ» արտահայտությունը իշխանությունները թողել են ավելի հեռավոր՝ հանդարտ ժամանակների համար ու վերջապես որոշել են զբաղվել իրենց հիմնական զբաղմունքով՝ նախընտրական պարտավորությունների կատարմամբ, երկրի թնկուզ թվացյալ ժողովրդավարացմամբ (ի տարբերություն նախորդ կառավարությունների, այս իշխանության ձեւականն էլ է հուսադրող): Պակաս գրավիչ չէր այն գաղափարի բարձրաձայնումը, թե իշխանությունը ծառայելու է ժողովրդին: Հուսանք, ժողովուրդ ասելով իշխանությունները նկատի չունեն կազինոներում եւ գիշերային ակումբներում իրենց «վատսակաբ» հանգիստը վայելող պատգամավորներին կամ քաղաքական բանավեճերով ընտանիք պահող կուսակցականներին ու պարտիզանական կեցվածքով ճանկլավիկներին ու խմբերին, որ երբ ազատ ժամանակ են ունենում, վազում են «սատանինի ու Մալաթիայի տնավաճառներ՝ նորություն փնտրելու»:

Ու եթե մեր հույսերն ուտոպիական չեն, իսկական ժողովուրդը՝ գոդադանի աշխատակիցը, ուսուցիչն ու բանվորը, հավահարն ու վարորդը, հացավաճառն ու պահակը, հաշվապահն ու ծանկարարեզի դարձակը, արդեն ոտքի կանգնի դրական փոփոխությունը նկատելու: Բայց արդյո՞ք այդպե՞ս է:

Կյանքի որակի դրական տեղաշարժը գոնե չեխված լոգարանի համար ակնառու կլինի առաջնահերթ բարելավված սոցիալական ոլորտում, որն, ի դեմ, հրաբալի մահակ-ճնաղատությունն է բոլոր ժամանակներում յուրաքանչյուր իշխանության ընդդիմադիրների ձեռքին: Սա է (իշխանությունների համար) «չարիքի» բերած բարիք, որ այնքան հեգնական եղավ Հայաստանում՝ վերադարձնելով հին շնագայլերին՝ նորերի (ըստ էության, իրենց ծոցում տաքացածների) հախից այսպես անպատիվ կերպով գալու համար: Իսկապես կեղտոտ քաղաքական պայքար է, նման երկու կասկածելի վարի տեր կանանց կռվին: Այնքան կեղտոտ, որ չես էլ ուզում մանրամասներին տեղյակ լինել, բայց չես կարող լուռ գնալ չնայել-չտեսնելով, չէ՞ որ այդ կեղտոտ խաղը գնում է մարդկանց վաղանցիկ կյանքի որակի հաշվին: Իսկ կյանքի որակ ասվածը նախեւառաջ սոցիալական ոլորտն է՝ կենցաղը իր բոլոր ծանր ու մեծ դժվարություններով՝ հացի որակը, գինն ու հաշը, հաղթացու տունը, բակը, վերելակը, եւ վերջապես, գրպանի պարունակությունն ու ծախսերի ցուցակը: Պարզունակ է, այո, բայց սա է եւ սոնիից է սացվում կյանքի որակի գնահատականը:

Եվ որքան ուժգին է տանջում սոցիալական ոլորտի ծանրությունն դարձանակը վերը նշված ժողովրդի դեմքին ու մեջքին, այնքան մեղավոր է տվյալ իշխանությունն ու այնքան արժանի է այն ընդդիմության ճնաղատություն-մահակին, որ մարսելով ժամանակին կերած սեփական բողկերը, գլուխ է բարձրացնում ներկանների կերածների մարսողությունը վատացնելու նպատակով: Այո, միայն այդպանը, թե չէ՝ «մենք լավն ենք, մենք գրագետ ենք ու գալու ենք, որ հարցնենք» զիգի խոսքերով այսօրվա միամիտ երեխային էլ չես խաբի, նա գիտի, որ հեքիաթներում անգամ պառավ, չար կախարդը ժամանակավորապես փերի կարող է թվալ: Ինչեւէ, «կախարդը» մեր դեմքերում զգոնացնող իրավիճակ է ստեղծել, եւ իշխանությունները առայժմ պարտավոր են հատկապես սոցիալական ոլորտում առագ ցնցումներ իրականացնել:

Մասնավորապես, մեր ուռճացված ու պարադ-սարադ նախարարություններում ու դրանց ենթակա կառույցներում վերադասավորումները պետք է բերեն ոչ թե «գումարելիների տեղափոխության ու գումարի անփոփոխության», այլ ճիշտ հակառակը՝ գումարի բազմապատկության՝ պատասխանատու մասնագետների հաշվին, անգրագետներից հրաժարվելու հաջողության գնով: Ասել է թե՝ վարչապետ Տիգրան Սարգսյանը, որքան էլ այլեւս յուրայիններին մոտ օտար լինելու մտավախություններ ունենա, պետք է իսկապես հաշվի չառնելով որեւէ պաշտոնյայի ով կամ ինչ լինելը, անհապաղ ազատի աշխատանքից տանապորտային ոլորտի բոլոր այն պատասխանատուներին, որոնք սեփական ջիղ ու համոզմունքների մուգ ադամանդների միջով չեն էլ ուզում տեսնել, թե ինչ ծանրաբեռնվածությամբ են աշխատում հարյուրավոր երթուղայինները, որոնց փոխարեն ավտոբուսներն առավել գեղադասելի են: Տարիներ ի վեր արդեն ծառայողական մեքենայի պատուհանից փողոց նայող վարչապետը բոլորից էլ լավ պետք է իմանա, որ ներկայիս հասարակությունը (վերոհիշյալ ժողովուրդն էլ հեսը), մեկ է, այդպես էլ չի դադարելու անտեսել 13 զբաղված նստատեղերով երթուղային գազելը եւ նրա անկիրթ ու կարգազանց վարորդին, որ այնուամենայնիվ գերաճարաբեռնված մեքենան պատրաստ է պայթեցնել, քան մեկ ուղեւորի բաց թողնել, եւ բարձրանալուխցկվելու է երթուղային մեքենա: Սա էլ մեկ այլ, ոչ պակաս կարեւոր բանի պակասից է՝ այսօրվա քաղաքացին հիմնականում ոչ միայն կարգազանց է, այլեւ մշակութազուրկ՝ բառի խոր եւ լայն իմաստով:

Հիմա ինչ անենք, թողնենք, որ գազելը օրական հարյուր անգամ օդն աղտոտելով գա ու անցնի՞, ամեն երթուղում մի 30 մարդու շախմատի ձի սարքած, թե՞ գեսիրոջը կամ ազատենք գնից, կամ սիրեցնենք մատուցել այնպիսի ծառայություն, որի համար ժողովուրդը նախ՝ հոժարությամբ վճարի, ապա մարդավայել կերպով երթեւեկի: Իհարկե, դրանից կտուժեն բազմահազար տախիսները, որոնց սարսափելի հանկարծությունն ու մատուցած ծառայությունը ինֆարկտի կոնկրետ պատճառն են թե՛ մատուցած ծառայության կերպի (տախիսների մեծ մասը չունի սոիդոմետր եւ ծառայություն մատուցողի գիտակցությամբ վարող), թե՛ քաղաքի կեղտոտ օդն առավել կեղտոտ դարձնելու իմաստով:

Վարչապետի քարն իրոք ծանր է, քանի որ գեսետր կոչվածը այս իշխանությունների գերեզմանափորերից ամենազորեղն է, բայց նրանից պակաս խայտառակ չեն բնակիչների սոցիալական վիճակի համար մեկ պատասխանատու թաղամասերն ու համաշիրությունները: Սրանց թագուտսակը վերելակների վարչությունն է (շենքերի բակերի անմխիթար ու ծախված վիճակը թողնենք վաղուց նիլիոնատեր դարձած թաղամասերի խղճին), որ աշխատում է այն նույն ոճժիմով ու պատասխանատվության զգացումով, ինչ 20 տարի առաջ, այսինքն՝ կստրենք փչացած վերելակները. ժողովուրդ ջան, բայց թե ո՞ր ժողովրդինը, ծ՞ր եւ ինչ որակով, արդեն ի՞մացանք:

Էլի ոլորտներ կան, որոնք դառնացնում ու կարեւացնում են ժողովրդի կյանքը՝ կոռումպացված առողջապահություն ու կրթություն, ոչնչացվող բնապահպանություն, հրեական ոգգբորկայի վերածված շուկայական ոլորտի անարդարություններ՝ բիզնես գողանալուց մինչեւ չբացահայտված սպանություններ: Բայց այնուամենայնիվ, հասարակայնության լայն շերտերին առավել հուզում եւ, ներողություն արտահայտությանս, գազազեցնում է սոցիալական խայտառակ ու փնթի վիճակը, որի շնչումը կարող է մի քանի տոս մեխ հանել ընդդիմություն կոչվածի «սոցիալական» պիտակով զարդարված մտակից:

ՍՈՒՐԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տավուշ-Լոռի

«Թափանցիկ տեղական ինքնակառավարում»

Ձեւական աճուրդ Թեղուտում

Համայնքապետ Գեւորգ Թամրազյանը աճուրդ է բեմականացնում

Տավուշի մարզի Թեղուտ գյուղի համայնքապետարանը մայիսի 5-ին գյուղի «Հաղարծին յալ» թաղամասից աճուրդի էր ներկայացրել 1190 քմ հողակտոր: Հողամասն աճուրդով վաճառելու մասին հայտարարությունը տպագրվել էր «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի ապրիլի 4-ի համարում: Աճուրդի մեկնարկը հայտարարված էր ժամը 12:00-ին, համայնքապետ Գեւորգ Թամրազյանը, ով պետք է անցկացներ աճուրդային վաճառը, Թեղուտում չէր: Նա անձնական գործերով Երեւան էր մեկնել: Համայնքապետարանի աշխատակիցներից տեղեկանալով աճուրդին ներկա գտնվելու մեր ցանկության մասին՝ պրն Թամրազյանը զանգահարեց եւ հայտնեց, որ աճուրդը սկսվելու է ժամը 15:00-ին: Սակայն տա աճուրդային կարգի միակ խախտումը չէր: Աճուրդին մասնակցել ցանկացողները պետք է մոտ 3 օր առաջ մասնակցության հայտ ներկայացնեին Թեղուտի համայնքապետարան:

Հողամասի աճուրդային վաճառի համար հայտ ներկայացրած 2 անձանց՝ Սեյրան Հովսեփյանի եւ Ալեքսանդր Բաղալյանի հայտերում, ուշագրավ զուգադիպությամբ, նույն ջնջումն է: Հայտերը նախ լրացվել են մայիս ամսով, իսկ հետո ջնջումներով հայտերի ներկայացման ամսաթիվը դարձել է ապրիլի 30-ը: Ինչեւիցե, ժամը 15:00-ին համայնքապետարանում սկսվեց բնակելի կառուցապատման նպատակով վերհիշյալ հողամասի վաճառը: Հողամասն օտարվում էր կադաստրային արժեքով՝ 1 քմ-ը 222 դրամով, մեկնարկային ընդհանուր գինը՝ 265 հազար դրամ: Աճուրդն անցավ կանխատեսելի սցենարով. Երեւանի բնակիչ Սեյրան Հովսեփյանը մի քայլ կատարեց մեկնարկային արժեքի 5 %-ի չափով: Դան հետեւեց մյուս մասնակցի՝ նույնպես երեւանցի Ալեքսանդր Բաղալյանի քայլը՝ 5%-ի չափով: Համայնքապետը փայլատ մուրճիկով ազդարարեց աճուրդի ավարտը, եւ Ալեքսանդր Բաղալյանը 291 հազար դրամով դարձավ 1190 քմ մակերեսով հողամասի տեր:

Աճուրդը կարող էր ավելի երկար տեւել, ինչի մասին վկայեց Ա. Բաղալյանը. «Ճիշտն ասած՝ ես պատրաստ էի մի քանի քայլ էլ անելու, որովհետեւ ուզում եմ այստեղ իմ ձեռքով տուն կառուցել»: Նա ասաց, որ մասնագիտությամբ ճարտարապետ է, եւ իր համար հետաքրքիր կլինի կառուցելը: Մանավանդ որ, իր վկայությամբ, պարզ իջեւանցի է եղել, եւ «հողը ձգում է»: Սեյրան Հովսեփյանը, ով մայրաքաղաքից 100 կմ ճանապարհ էր անցել աճուրդում լոկ մեկ քայլ կատարելու համար, պարտությունից իրեն վիրավորված չէր զգում: Ի դեպ, աճուրդից հետո նա նստեց Ալեքսանդր Բաղալյանի արտասահմանյան արտադրության ավտոմեքենան եւ միասին վերադարձան Երեւան: Համայնքապետ Գեւորգ Թամրազյանի վկայությամբ՝ 2007 թ. գյուղում թվով 7, ընթացիկ տարում 2 հողամաս է աճուրդով վաճառվել:

«Սակավահող Թեղուտ համայնքում հողերի օտարումն ինչ նպատակ է հետապնդում» մեր հարցին համայնքապետը պատասխանեց. «Մի քանի նպատակ ունի: Համայնքում խնդիրներ կան լուծելու, որոնց համար ֆինանսներ են պահանջվում: Պարենի համաշխարհային ծրագրի աջակցությամբ ջրագիծ ենք կառուցում: Այդ ծրագրում համայնքը 4.5 մլն դրամ ֆինանսական ներդրում պետք է կատարի: Այլ տեղից ֆինանսական օգնության հույս չունենք: Համայնքի հողերն օտարելով՝ մի կողմից լուծում ենք խմելու ջրի հարցը, մյուս կողմից՝ չօգտագործվող հողատարածները վաղը մյուս օրը կբարելավվեն, կկառուցապատվեն, գյուղը կընդարձակվի, որից նաեւ գյուղի բյուջեն կմեծանա՝ գույքահարկ, հողի հարկ կգանձվի: Այսինքն՝ դա գյուղի համար նպաստավոր է բոլոր առումներով»:

Սակայն համայնքի բյուջեն էապես համալրելու համար պետք է իրական աճուրդ կայանա, մեծ թվով անձանց մասնակցությամբ: Մանավանդ որ, համայնքապետն էլ է ընդունում, որ Թեղուտի 1600 բնակիչների մեջ աճուրդին մասնակցելու համար վճարունակ մարդիկ կան: Համայնքապետը լրագրողին ասում է՝ ցանկալի կլիներ, որ աճուրդին թեղուտցիներ մասնակցեին: Համայնքապետարանի շենքի առաջին հարկում հայտարարությունների ցուցանակ կա, որ զանազան բնույթի ազդեր են փակցվում: Սակայն այնտեղ 1190 քմ հողամասի վաճառի վերաբերյալ տեղեկատվությունը չի գտնվել: Համայնքապետ Գ. Թամրազյանը հավատացրեց էր, որ համայնքի բոլոր բնակիչներն էլ աճուրդային վաճառից տեղյակ են, քանի որ ինքը համայնքի ավագանու անդամներին պատվիրել է, որպեսզի նրանցից յուրաքանչյուրն իր թաղամասում տեղեկացնի աճուրդի մասին: Համայնքապետարանի դիմաց խմբված թեղուտցիների հետ մեր զրույցը հակառակն ապացուցեց: Գյուղի բնակիչ Յուրիկ Թամրազյանը, Առարատ եւ Աղասի Հախվերդյանները, Ռազմիկ Եսգիբարյանն անտեղյակ էին հողամասի աճուրդից: Ավելին, այդ վաճառից անտեղյակ էր նաեւ համայնքի ավագանու ակտիվ անդամներից մեկը՝ Ռենիկ Բաբինյանը: Վերջինս ասաց, որ գիտեր հողամասն օտարելու մասին, սակայն տեղյակ չէր, որ մայիսի 5-ին է կայանալու աճուրդը: Նա նաեւ չգիտեր, թե որտեղ է գտնվում այդ հողամասը: Դեռ մինչ աճուրդը, ի պատասխան 1190 քմ հողամասի վաճառի վերաբերյալ հարցի, նա կարծիք հայտնեց, թե այդ հողամասը պատկանում է գյուղացիներից Ալվարդ Հախվերդյանին, ով ժամանակին այդտեղ ցանկապատում է կատարել, եւ աճուրդը միայն օրինականացնելու է հողամասի փաստացի պատկանելությունը:

Առավել ուշագրավ էր համայնքապետի տեղակալ Ալբերտ Հովհաննիսյանի հայտնածը, որ հողամասն օտարելու մասին հայտարարությունը հրապարակվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում: Երբ նրան հարցրի, թե «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի քանի՞ օրինակ են ստանում գյուղում, նա անվարան պատասխանեց՝ տուրք 50: Մեր տարակուսանքը տեսնելով՝ նա միայն ծուռ ժպտաց:

Համայնքապետարանում համայնքի ղեկավարն ու մրցույթում հաղթած Ալեքսանդր Բաղալյանն ասում էին, թե վաճառված հողամասը ժայռոտ է, կառուցապատման համար՝ ոչ հարմար: Համայնքապետին առաջարկեցինք միասին տեսնել հողամասը: Այն հենց ճանապարհի եզրին էր, կոմունիկացիաների՝ խմելու ջրագծի, գազատարի եւ էլեկտրական գծերի հարեւանությամբ: Ընդամենը երկու ոչ մեծ քար կար հողում: Տեղանքից հիանալի տեսարան էր բացվում դեպի «Դիլիջան» ազգային պարկի անտառները: Հողամասն էլ ոչ թե ամայի վայրում էր, ինչպես ասվում էր, այլ առանձնատների կողքին, համայնքապետի տնից 50 մ հեռավորությամբ:

1600 բնակիչ ունեցող Թեղուտն ընդամենը 11 հա վարելահող եւ 71 հա տնամերձ ունի: Ընդարձակվող գյուղում տնամերձերի խիստ պակասություն է զգացվում: Համայնքապետարանը պատրաստվում է այս խնդիրը լուծել ի հաշիվ չմշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի, որի համար պետք է դիմել կառավարությանը՝ դրանց նշանակությունը փոխելու եւ այդ տարածքները բնակելի կառուցապատման նպատակով գործածելու:

Թեղուտն առողջարանային Դիլիջան քաղաքից ընդամենը 8 կմ հեռավորության վրա է գտնվում: Դիլիջանն էլ, կառավարության որոշմամբ, հանրապետության ֆինանսական կենտրոն պետք է դառնա: Թեղուտի տարածքում, նշանավոր Հաղարծին վանական համալիր տանող ճանապարհին հողամաս ունենալը շատ երեւանցիների է հետաքրքրում: Թոշակառու Ռազմիկ Եսգիբարյանը վրդովվում է. «Էրեվանցիք գյուղը գրավել են՝ Հաղարծին տանող ճանապարհին»:

ՈՍԿԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ

Մրցակցությունը ձեւականորեն պահպանվում է

Քարկոփի ավագանին չի հասցնում համայնքի բյուջեն

Լոռու մարզի 370 բնակիչ ունեցող Քարկոփ համայնքը գտնվում է Ալավերդի քաղաքից 30 կմ հեռավորության վրա: Խորհրդային տարիներին բանվորական ավան Քարկոփը տարածաշրջանում հայտնի էր իր խճի գործարանով, որտեղ աշխատում էին ավանի հիմնական աշխատուժը կազմող շուրջ 100 բանվորներ: Ներկայումս գործարանը սեփականաշնորհվել եւ կոչվում է «Այրումի լեռնագործ» ԲԲԸ: Ընկերության սեփականատեր վանաձորցի Սեյրան Սաֆելյանը տեղեկացրեց. «Ընկերությունում աշխատում են 30 բանվորներ, որոնք Քարկոփ եւ Ցոնքան գյուղերի բնակիչներ են»: Արտադրության պետ Վաչագան Ավետիսյանն էլ հավելեց. «Ընկերությունը մեկ ամսում տալիս է 3 հազար տոննա արտադրանք, եթե ամբողջ տարին աշխատենք, տարեկան կարող ենք 36 հազար տոննա արտադրանք տալ, սակայն ծախը պահանջարկ չլինելու պատճառով չենք աշխատում: Մեր արտադրանքը գնում է երկաթուղին»:

Քարկոփի համայնքում աղքատությունն առաջին հայացքից այլի է զարնում. կենցաղնական մայրուղուց մինչեւ Ցոնքան գյուղ բարձրացող, գյուղի կենցաղնով եւ խճի գործարանի հարեւանությամբ անցնող 1կմ երկարությամբ անբարեկարգ ճանապարհահատվածն անանցանելի է ոչ միայն ավտոմեքենաների, այլեւ մարդկանց համար: «Այրումի լեռնագործ» ԲԲԸ-ի արտադրած խճով, Քարկոփ եւ Ցոնքան համայնքների բյուջեների համաչափ ներդրումով հնարավոր է բարեկարգել ճանապարհահատվածը: Ցոնքանը նույնպես օգտվում է այդ ճանապարհից: Սա կարող էր իրականացվել, եթե Քարկոփի համայնքապետը բնակչության հիմնախնդիրները լուծելու ցանկություն ունենար: Գյուղի բնակիչները վիրավորված ու վրդովված են տարիներ շարունակ Լոռու մարզպետարանի եւ կառավարության՝ իրենց նկատմամբ ցուցաբերած անտարբերությունից: Ինչպես պատմեցին գյուղացիները, արդեն 2-րդ տարին է՝ Քարկոփի ավագանու կողմից հատկացված բյուջե չունի: Այս կապակցությամբ Լոռու մարզպետարանի ֆինանսական բաժնի վարիչ Սեյակ Հովհաննիսյանը պարզաբանեց. «Այո, Քարկոփի ավագանին արդեն երկրորդ տարին է չի հատկացնում համայնքապետ Կատո Ռամազյանի ներկայացրած բյուջեն: Լոռու մարզպետի կողմից նրա անվստահության հարցը ներկայացվել է կառավարություն, կառավարությունն այն չի հաստատել: Սակայն աշխարհը դրանով չի ավարտվում, նախկին հատկացված բյուջեի հաշվամատյաններով է կատարվում համայնքապետարանի ֆինանսավորումը»: Ըստ պրն Հովհաննիսյանի՝ համայնքապետարանն այսօր ֆինանսավորվում է 2006 թ. ավագանու կողմից հատկացված բյուջեով, որի եկամուտները կազմում են 3,3մլն դրամ, դրացիան՝ 2,3մլն դրամ, հողի հարկը՝ 482 հազար, գույքահարկը՝ 570 հազար դրամ: Թեեւ մեր այցելությունն աշխատանքային ժամին էր, այդուհանդերձ, գյուղապետարանի դուռն ամուր փակված էր: Ու մինչ այստեղ հավաքված կանայք որոշում էին, թե ոտ գնացած կլինի գյուղապետ Կատո Ռամազյանը, պատմեցին իրենց հոգսերից:

«Շատ վատ ենք ապրում, ոչ ջուր ունենք խմելու, ոչ գազ, աշխատատեղ էլ միայն դպրոցն է: Քարկոփում իրենց գոյությունը մարդիկ մի փոքր այգով են պահում»,- ասաց Ռոզա Ջերեզյանը:

Իրինա Հակոբյանն էլ բացատրեց. «Խմելու ջուր չունենք, վագոնով են բերում, որ վագոնը չի լինում, ջրհորի ջուր ենք խմում»:

«Գազը կարան ճոճկանից էլ քաշեն, Արծիսից էլ: Մեր գեղապետը էդքան ուժ չունե, որ ինքն անե: Գյուղապետին պետք է վերնախավն օգնե»,- ասաց Հաստիկ Կարապետյանը:

«Որ փող լինի, ամեն ինչ կլինի: Կարող է պետությունը մեզ չի մոռացել, ուղղակի Քարկոփը գլոբուսից մի փիչ հեռու ա»,- կատակեց քարկոփցի երիտասարդ Համլետ Հակոբյանը: Գյուղի միջն. դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Ազնիվ Ալեքսանյանն էլ խնդրեց. «Դպրոցում հայ գրականությունից հանձնարարված ծրագրային որեւէ գիրք չենք կարողանում կարդալ, քանի որ արդեն երկու տարի գյուղի գրադարանի դռները փակ են: Օգնեք մեզ բացեն գրադարանը, մեր դպրոցի բարձր դասարանցիներս գրադարանի կարիքը շատ ենք զգում»:

Եվգենյա Այբեկյանն էլ ցույց տվեց երկաթգծի վրա կանգնած հսկա ջրի վագոնը եւ հայտնեց իր մտահոգությունը. «Դպրոցական երեխաները դույլերով ջուր են կրում այստեղից, եթե դիմացից գնացք դուրս գա, երեխաները փախչելու տեղ չունեն, մի օր դժբախտությունն անխուսափելի է լինելու»:

Քարկոփի ավագանու 5 անդամներից հաջողվեց տեսնել միայն Լալա Անանյանին, որն էլ ասաց. «Ես 2005 թ. եմ ընտրվել ավագանու անդամ, սկզբից գյուղապետն ինչ արավ, ինքն արավ, ավագանուն ոչ մի հարցով հաշվի տեղ չէր դնում, ամեն ինչ անում էր ինքնագլուխ, 2006 թ. ասացինք՝ սենց չի լինի: Կատարողական ուզեցինք, չտվեց, հաշվետվություն ուզեցինք, ասաց՝ դա ձեր գործը չի, ինչ հարցնում էինք, ասում էր՝ կգնամ կիմանամ, կգամ կասեմ:»:

Երկու տարի իր ներկայացրած բյուջեն ավագանու կողմից չհատկացնելու փաստը Քարկոփի գյուղապետ Կատո Ռամազյանն այսպես մեկնաբանեց. «Ըստ ինձ՝ նրանք ունեն հրահրող, ես չեմ տալիս նրա անունը, հրահրողը կտանա իր պատասխանը: Եթե նրանց նպատակն ազնիվ է, կարող են հատկացել բյուջեն եւ հետեւողական լինել դրա կատարմանը: Երբ 2006 թ. դեկտեմբերին ընդունվում էր 2007 թ. բյուջեն, ես նախապես ավագանուն ներկայացրել եմ բյուջեն եւ խնդրել եմ նրանց առաջարկություններն ու դիտողությունները: Միակ առարկությունը եղել է ավագանու անդամ Կատո Օհանյանի կողմից՝ իմ աշխատավարձի չափը 60 հազար դրամից 70 հազար դրամ դարձնելու դեմ: Ես դա հանել եմ ընդունվածից,

Տես էջ 6

«Համայնքային հաշվետվություններին ծանոթանալիս մարդիկ չպետք է կաշկանդվեն»

Նորատուսի համայնքապետ Անդրանիկ Հակոբյանը պատասխանատու է 1992 թվականից: Համայնքն ունի շուրջ 7 հազար բնակիչ: Սա նշանակում է, որ համայնքում թեժ են լինում ընտրական մրցավեճերը: Իր հաջողությունները համայնքի ղեկավարը բացատրում է պատասխանատվությամբ եւ թափանցիկ աշխատանքով. «Ինչ արվում է՝ բնակիչները պետք է իմանան: Մարդիկ իրազեկվում եւ հասկանում են, թե ինչի համար են հարկեր վճարում: Համայնքի բնակիչները պետք է իմանան, թե որ ծրագրերն են իրականացվում տեղական միջոցներով, եւ որոնք՝ այլ»: Նա նաեւ նշում է, որ ընտրություններում ստացած շատ քվեներն ավելի են մեծացնում պատասխանատվության ու պարտավորությունների չափը, իսկ առանց հրապարակային աշխատանքի հնարավոր չէ շահել համայնքի բնակիչների վստահությունը:

Տպավորիչ է, սակայն նման մոտեցում ունեցող համայնքապետերի թիվը փոքր է: Հազվադեպ է պատահում նաեւ, որ ՏԻՄ ներկայացուցիչը իրազեկ լինի օրենքի պահանջներին: Որպես օրինակ նշենք, որ ՏԻՄ ներկայացուցիչների հետ մեր ավելի քան 20 հարցազրույցներից Նորատուսը միակն էր, որի համայնքի ղեկավարը եւ աշխատակազմի քարտուղարը, միմյանցից անկախ, նշեցին, որ ավագանու նիստի օրակարգի նախագիծը, դրանում ընդգրկված հարցերի որոշման նախագծերը եւ համապատասխան փաստաթղթերը ավագանու անդամներին տրամադրվում են նիստը գումարելուց 7 օր առաջ: Աշխատակազմի քարտուղար Կարինե Հարությունյանը նշում է, որ թեպետ ավագանու նիստի կայանալու մասին հայտարարությունները տեղադրում են համայնքապետարանում եւ փոստում, սակայն համայնքի բնակիչները հազվադեպ են նիստերին մասնակցում:

Համայնքապետարանում փակցված ընդարձակ տեղեկությունները՝ համայնքի զարգացման ծրագիր, 2008 թ. բյուջե, համայնքի միջոցներից օգնություն ստացած անձանց անվանական ցուցակներ, կարգապահական կանոններ եւ այլն, հաստատում են ասվածը: Համայնքապետը նշում է, որ տեղեկությունները իրենց աշխատանքներից հետո են տեղադրում, որպեսզի մարդիկ չկաշկանդվեն իրենց ներկայությունից: Մինչդեռ մեր այցելած համայնքապետարանների շատ աշխատակիցներ վստահեցնում են, թե ցանկացած բնակչի պատասխան տրամադրվում համայնքի բյուջեն, բյուջեի կատարողականը եւ այլն: Սակայն դատարկ ցուցատախտակներն ու տեղեկատվական նյութերի բացակայությունը վկայում են փակ աշխատանքի մասին:

Հաճախ է առիթ լինում ՏԻՄ ներկայացուցիչների հետ ինքնակելու համայնքի բնակիչների համար տեղեկությունների մատչելիության հարցը: Չէ՞ որ բնակիչներից շատերը ցանկություն ունեն տեղեկություններ ստանալ առանց որեւէ աշխատանքի դուռը բախելու, առանց լրացուցիչ բացատրություններ տալու: Օրինակ՝ դժվար է պատկերացնել համայնքի այն բնակչի վիճակը, ով համայնքի ղեկավար դառնալու եւ գործող համայնքապետի հետ մրցակցելու ցանկություն ունի եւ այցելում է համայնքապետարան՝ բյուջեին կամ ավագանու որոշումներին ծանոթանալու: Այս առումով գնահատելի է, երբ համայնքապետարանում առահովվում են անհրաժեշտ պայմաններ եւ մթնոլորտ:

Ասվածն արեն բավարար է, որպեսզի հասկանալի դառնա, թե ինչու է Նորատուս համայնքի ղեկավար Անդրանիկ Հակոբյանը Հայաստանի Հանրապետության կողմից ընդգրկվել ԵՀՏԽ-ով տեղական եւ տարածքային իշխանությունների պատի կազմում: 2002 թվականից նա պատի 9 պատվիրակներից մեկն է: Ի դեմ, պատվիրակության կազմում 2-ը ՀԿ ներկայացուցիչներ են, 7-ը՝ համայնքների ղեկավարներ: Պատվիրակ համայնքի ղեկավարներից 4-ը Երեւանի քաղաքից, 1-ը՝ քաղաքից, 2-ը գյուղական համայնքների ղեկավարներ են:

Նորատուսի համայնքապետ Անդրանիկ Հակոբյանը նաեւ պարգեւների է արժանացել: 2006 թ. տեղական ինքնակառավարման համակարգի 10-ամյակի կապակցությամբ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը նրան պարգեւատրել է ոսկյա հուշամեդալով, իսկ 2007 թ. դեկտեմբերի 26-ին ՀՀ նախագահը պարգեւատրել է Անանիա Շիրակացու մեդալով:

Ա. Հակոբյանի համոզմամբ՝ հարեւան երկրների համեմատությամբ մեզանում տեղական ինքնակառավարման կայացման շուրջ 12 տարվա ընթացքում նկատելի առաջընթաց է տեղի ունեցել: Նա նշում է, որ Եվրոպայում տեղական ինքնակառավարումը 150 եւ ավելի տարիների կենսագրություն ունի, հետեւաբար այդ համակարգի կայացումը ժամանակ է պահանջում: Համակարգի զարգացման համար Ա. Հակոբյանը կարեւորում է աղակենտրոնացման անհրաժեշտությունը, մասնավորապես զուտ համայնքային ծառայությունների առումով. «Ծառայությունները (հատկապես սոցիալական, նոտարական, հաղորդակցության կազմության ակտերի գրանցման) պետք է մոտ լինեն, որպեսզի բնակիչները դրանք ստանան տեղում»: Նա նշում է, որ բոլոր համայնքներում էլ շատ ու շատ խնդիրներ կան, ինչպես, օրինակ, հողի կատեգորիա փոխելը, որոնք ուղղակիորեն տանում են դեպի Երեւան: Այդ պատճառով էլ խնդիրները չեն լուծվում:

«Եթե ընկերությունն աղբատար ավտոմեքենա է նվիրել համայնքին, եւ 2008 թ. սկսած՝ ամենօրյա աղբահանության աշխատանքներն իրականացվում են այդ ավտոմեքենայով: Որոշել են աղբարկղեր չտեղադրել, այլ առավոտյան շրջայցով իրականացնել աղբահանությունը, քանի որ մյուս համայնքների փորձը ցույց է տալիս, որ նոր աղբակույտեր են առաջանում աղբարկղերի շրջակայքում: Նախատեսում են այս տարի իրականացնել փողոցների լուսավորության ցանցի վերականգնման եւ ասֆալտապատ ճանապարհի կապիտալ նորոգման աշխատանքներ:

Որպես ամփոփում նշենք, որ Նորատուսը հաջողություններից զատ ունի նաեւ շատ խնդիրներ: Միայն այն, որ համայնքն ունի շուրջ 40 մլն հողի եւ 12 մլն գյուղահարկի աղառներ, արդեն լուրջ դժվարություն է ցանկացած համայնքի առաջընթացի համար: Սակայն ակնհայտ է այն, որ օրենսդրությանը համահունչ եւ թափանցիկ գործելաոճը կարող է միայն նպաստել առկա ու նոր խնդիրների լուծմանը:

Թեպետ փորձում ենք յուրաքանչյուր համայնքի ՏԻՄ գործունեությանն անդրադառնալ առանց անձնավորելու, սակայն



Ինչն է խանգարում մյուս համայնքապետերին կատարել օրենքի պահանջը

դեկավարը եւ աշխատակազմի քարտուղարը, միմյանցից անկախ, նշեցին, որ ավագանու նիստի օրակարգի նախագիծը, դրանում ընդգրկված հարցերի որոշման նախագծերը եւ համապատասխան փաստաթղթերը ավագանու անդամներին տրամադրվում են նիստը գումարելուց 7 օր առաջ: Աշխատակազմի քարտուղար Կարինե Հարությունյանը նշում է, որ թեպետ ավագանու նիստի կայանալու մասին հայտարարությունները տեղադրում են համայնքապետարանում եւ փոստում, սակայն համայնքի բնակիչները հազվադեպ են նիստերին մասնակցում:

Համայնքապետարանում փակցված ընդարձակ տեղեկությունները՝ համայնքի զարգացման ծրագիր, 2008 թ. բյուջե, համայնքի միջոցներից օգնություն ստացած անձանց անվանական ցուցակներ, կարգապահական կանոններ եւ այլն, հաստատում են ասվածը: Համայնքապետը նշում է, որ տեղեկությունները իրենց աշխատանքներից հետո են տեղադրում, որպեսզի մարդիկ չկաշկանդվեն իրենց ներկայությունից: Մինչդեռ մեր այցելած համայնքապետարանների շատ աշխատակիցներ վստահեցնում են, թե ցանկացած բնակչի պատասխան տրամադրվում համայնքի բյուջեն, բյուջեի կատարողականը եւ այլն: Սակայն դատարկ ցուցատախտակներն ու տեղեկատվական նյութերի բացակայությունը վկայում են փակ աշխատանքի մասին:

Նրա գնահատմամբ՝ իրենց համայնքում ավագանու ինստիտուտը կարելի է կայացած համարել: Դա պայմանավորված է համայնքի ավագանու անդամների՝ բարձրագույն եւ հիմնականում տնտեսագիտական կրթություն ունենալու հանգամանքով: Երկրորդական չի կարելի համարել նաեւ այն, որ 1996 թ.-ից համայնքապետարանում կա ավագանու սենյակ, առանց որի դժվար է պատկերացնել աշխատելու ցանկություն եւ հնարավորություն:

Նորատուսի համայնքապետարանը առահովված է սարքավորումներով՝ համակարգիչներ, տպիչներ, պատճենահանման սարք, ֆաքս եւ այլն: Ավագանու նիստերի հետ կապված բոլոր նյութերը մեկում եւ տպագրում են համայնքապետարանի աշխատակիցները: Տեղեկատվական բնույթի նյութերը նույնպես: Այնպես որ, գործավարության մակարդակը նկատելի է: Հարկ է նշել, որ մեզ հետաքրքրող նյութերն ու տեղեկությունները՝ ավագանու կանոնակարգ, աշխատակազմի կանոնադրություն, դիմումների ձայնյան, ավագանու նիստերի արձանագրություններ ձայնյան, բյուջետային տեղեկություններ, Նորատուսում տրամադրվում էին առաջին իսկ հարցադրումով: Սակայն մեր այցի մասին նախնական պայմանավորվածություն չէր եղել:

Մի քանի արժանահիշատակ աշխատանքների մասին եւս: Նորատուսում ամբողջ տարին գործում է 2 մանկապարտեզ, որտեղ հաճախում է 120 երեխա: Մանկապարտեզի համար ծնողները վճարումներ չեն կատարում: 2007 թ. պետական բյուջեից հատկացված միջոցներով՝ 200 մլն դրամ, հիմնովին մաքրվել է Նորատուս գյուղի միջով հոսող Գավառագետի հունը: 2007 թ. նախաձեռնած աշխատանքների շնորհիվ «Վիվա-Սել» ընկերությունն աղբատար ավտոմեքենա է նվիրել համայնքին, եւ 2008 թ. սկսած՝ ամենօրյա աղբահանության աշխատանքներն իրականացվում են այդ ավտոմեքենայով: Որոշել են աղբարկղեր չտեղադրել, այլ առավոտյան շրջայցով իրականացնել աղբահանությունը, քանի որ մյուս համայնքների փորձը ցույց է տալիս, որ նոր աղբակույտեր են առաջանում աղբարկղերի շրջակայքում: Նախատեսում են այս տարի իրականացնել փողոցների լուսավորության ցանցի վերականգնման եւ ասֆալտապատ ճանապարհի կապիտալ նորոգման աշխատանքներ:

Որպես ամփոփում նշենք, որ Նորատուսը հաջողություններից զատ ունի նաեւ շատ խնդիրներ: Միայն այն, որ համայնքն ունի շուրջ 40 մլն հողի եւ 12 մլն գյուղահարկի աղառներ, արդեն լուրջ դժվարություն է ցանկացած համայնքի առաջընթացի համար: Սակայն ակնհայտ է այն, որ օրենսդրությանը համահունչ եւ թափանցիկ գործելաոճը կարող է միայն նպաստել առկա ու նոր խնդիրների լուծմանը:

Թեպետ փորձում ենք յուրաքանչյուր համայնքի ՏԻՄ գործունեությանն անդրադառնալ առանց անձնավորելու, սակայն

ԼՈՒՍԻՆԵ ՋՈՒՄԱԼՅԱՆ

Քարկոփի ավագանին չի հաստատում համայնքի բյուջեն

Մ էջից

սակայն ավագանին չհաստատեց բյուջեն: Ես ավագանու անդամներին առաջարկել եմ իրենք պլանավորեն բյուջեն, միայն թե համայնքը հաստատված բյուջե ունենա: Նրանք դրան էլ չեն համաձայնել»:

Ի հակառակ Լոռու մարզպետարանի ֆինանսական բաժնի վարիչ Սեւակ Հովհաննիսյանի՝ Կաթո Ռամազանը հայտնեց, որ ավագանու կողմից բյուջեն չհաստատելու պատճառով չեն կարողանում համայնքի հիմնախնդիրների լուծման համար որեւէ ներդրումային աշխատանք կատարել: «Անհնգանելի գյուղամիջյան ճանապարհի մասնակի վերանորոգման համար համայնքի բյուջեն հնարավորություն ունի, սակայն հաստատված չէ, եւ մենք չենք կարող պատվիրել աշխատանք»,- ասաց նա: Համայնքի ջրի հիմնախնդրի մասին Կ. Ռամազանն ասաց, որ համայնքապետարանը տեղեկացված է, որ վագոնով բերվող ջուրը տեխնիկական է, կրային մասը շատ է, խմելու համար այնքան էլ միտանի չէ: Համայնքն ունի մի քանի ջրհորներ, որոնք սնուցվում են Դեբեդից: Նշենք, որ վերջին 15 տարիներին Ալավերդու կոյուղու մաքրման կայանի չգործելու պատճառով յուրաքանչյուր ամիս Դեբեդ է թափվում 56, 500 խմ կեղտաջուր՝ Սանահին կայարանային քաղաքամասի, մասնավորապես 7 բազմաբնակարան շենքերի ու մի շարք սեփական տների կոյուղաջրերն ու կենցաղային աղբը. Թումանյան քաղաքի եւ Ախթալայի կեղտաջրերը: Ըստ Հելսինկյան հանձնաժողովի Վանաձորի գրասենյակի՝ Վանաձորից մինչեւ Քարկոփ ընկած հատվածում համայնքների կոմունալ համակարգերից ամսական Դեբեդ գետն է լցվում 728 հազար 200 խմ կեղտաջուր, եթե սրան ավելացնենք Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատի արտադրական թափոնները, ապա պարզ կդառնա, թե Դեբեդից սնվող իրենց ջրհորներից ջրի փոխարեն ինչ են խմում քարկոփցիները: Գյուղապետ Կաթո Ռամազանը հայտնեց, որ իր համայնքի բնակիչներին հուսալի ջրով ապահովելու միակ ելքը Շնող գյուղի տակից, Սեւանավան-Նոյեմբերյան մայրուղուց դեպի Քարկոփ 5 կմ ջրագիծ քաշելն է, որի համար անհրաժեշտ է 600մլն դրամ: Քարկոփում արդեն երկու տարի գյուղապետն ու ավագանին վճռում են, դրա հետեւանքով համայնքի հիմնախնդիրներն այդպես էլ չեն լուծվում: Ու մինչ քարկոփցիները «տարակվում են իրենց դարդերի մեջ», Լոռու մարզպետարանն անվրդով հետեւում է այդ կռվին: Գյուղապետ Կաթո Ռամազանը որոշել է. «Ես 2008 թ. հոկտեմբերին նորից առաջադրվելու եւ ընտրվելու եմ Քարկոփի համայնքապետ, ես աղացուցելու եմ, որ գրագետ ավագանու հետ ունակ եմ լավ աշխատել»:

Ինչ է սպասվում քարկոփցուն՝ անհնար է գուշակել: Կառավարությունը, որ կարող էր այս հակամարտությանը վերջ դնել, երկու տարի շարունակ չի ուզում որոշում կայացնել: Այս վիճակը, կարծես թե, ձեռնտու է նրան՝ բյուջեից «ավելորդ» հատկացումներ չի անի:

ԼՈՒԻԶԱ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ

Հայաստանը հացահատիկի ինքնաբավ երկիր դարձնելու չորրորդ ծրագիրն է մշակվում

Վերջերս կառավարությունը գյուղատնտեսությանը վերաբերող երկու խոշոր ծրագիր է «ընդունել», որոնց ոլորտներում իրենք անդրադառնալ դրանց վերջնական հաստատումից հետո միայն: Բայց օրերս համաբխարհային շուկայում հացահատիկի գների շուրջ 42% անկումը առիթ հանդիսացավ որ առաջ անդրադառնալու այդ ծրագրից մեկին՝ «Հայաստանում ցորենի արտադրության ծավալների ավելացմանն ու ինքնաբավությանը վերաբերող» ծրագրին:

Այս ծրագրի բավականին հաղթահարած ձեռնարկումն արդեն նախկին նախարար Դավիթ Լոխյանը հիմնավորում էր աբխարհում հացահատիկի եւ, մասնավորապես, ցորենի գնի բարձրացման միտումով: Դրանից հետեւություն էր առվում, որ գների աճը լինելու է շարունակական եւ, հանրապետության անվտանգությունից ելնելով, անհրաժեշտ է տարեկան 450 հազար տոննա ցորեն արտադրել:

Աբխարհում ցորենի գնի աճը միանգամից, մի օրում տեղի չունեցավ, բայց մեզ մոտ այդ մասին կարծես բավական ուշ գլխի ընկան: Ավելի քան հինգ տարի է՝ մեր երկրում գործում է «Գյուղատնտեսության կայուն զարգացման ոլորտավարությունը», որը երկու տարին մեկ թարմացվում է Համաբխարհային բանկի մասնագետների մասնակցությամբ: Ոլորտավարության վերջին «բարեփոխումը» կատարվել է բոլորովին վերջերս, սակայն դրանում հացի ինքնաբավության մասին խոսք չկա: Եվ բոլորովին վերջերս բավականին անսպասելի եւ փոփոխելով այն, ընդամենը մի քանի տարվա ընթացքում դրա տեղում թողնելով առանց բուսականության քարտուղներ»,- ասվում էին նրանցից շատերը: Այդտեղներում, 1928-32 թթ. հնգամյա պլանում բնակչությանը հացի սեփական արտադրանքով բավարարելու խնդիր է դրվում: Խոսվում էր նույնիսկ որոշ քանակի արտահանման մասին: Դրանով իսկ Հայաստանում սկսվում է հացահատիկի արտադրության բնագավառում ինքնաբավարարման քաղաքականության իրականացման ժամանակաշրջանը: Դա ինքնաբավության առաջին ծրագրի փուլն էր: Մշակման տարածքները, ինչպես նշվեց, շարունակի ավելանում են, հիմնականում առտավայրերի եւ վատորակ հողերի հաշվին: Անտարակույս: Ցեն կարողանում բավարարել անգամ ներքին պահանջարկը: Արտահանման մասին լռում են մեկընդմիտ: Հայաստանը շարունակում է հացամթերք ներմուծել:

Այնուամենայնիվ, որոշ ժամանակ անց որոշում են, որ պետք է ոչ թե տարածքները մեծացնել, այլ կենտրոնանալ բերքատվության բարձրացման վրա: Անգամ այդ թեմայով կառավարության ու կենտկոմի մակարդակով ընդունվում են կազմակերպում: Դրանից վիճակը ոչնչով չի փոխվում: 5-6 տարվա անհաջող փորձերից հետո սովետական չինովնիկները հրաժարվում են ինքնաբավության առաջին ծրագրից, բայց դրանով ամեն ինչ չի վերջանում: Հարցին գրեթե նույնությամբ անդրադառնում են 20 տարի անց: Անցյալ դարի 50-ականների սկզբներին Սովետական Միության կառավարության եւ կուսակցության «Հայկական ՍՍՀ կոլխոզ-սովխոզներում ցորենի արտադրության ավելացման... միջոցառումների մասին» որոշումը նախատեսում է ընդարձակել հացահատիկի ցանքատարածությունները եւ բարձրացնել նրա բերքատվությունն այն հաշվով, որպեսզի հնարավոր լինի բավարարել հանրապետության ներքին պահանջները սեփական արտադրության հաշվին: Սա ինքնաբավության երկրորդ ծրագիրն էր, որը նախատեսում էր ցանքատարածությունները հասցնել 460 հազար հա-ի, որից 400 հազարը դնել ցորենի ցանքերի տակ՝ ապահովելով 22-25գ/հա բերքատվություն: Ընդ որում՝ նախատեսվում էր ցանքատարածություններն ավելացնել առտավայրերի, կարտոֆիլի եւ գանգրավուշի ցանքերի հաշվին: Լեռնային հողերը դնել խոտհարքի տակ, քանի հացահատիկի: «Հացահատիկային կոլտնտեսների մշակման տակ դնելով» առտավայրերը հսկայական վնասներ են կրում: Խոտհարքերը վատթարանում, կլիմայական եւ հողային պայմանների անհամապատասխանության պատճառով, տալով սնտեսական շատ թույլ արդյունք, հաճախ ոչնչացնում են հողը՝ մերկացնելով ոռոգման ցանցերի շարից դուրս գալու պատճառով դրանք այլեւս չեն ոռոգվում: Այդտեղներում, բերքատվությունն անընդհատ աճում է:

Մինչդեռ իրականության մեջ այդպես չի լինում: Ինչ է սացվում: Փաստորեն, հսկա խորհրդային Միությունը, որ ոչինչ չէր խնայում նախաձեռնած ցանկացած ծրագրի իրականացման համար, ժամանակին այս ծրագրի առումով երկու անգամ տեղի տվեց: Ընդ որում, այսօրվա ծրագրի համեմատությամբ՝ շուրջ 50 հազար տոննայով պակաս ցուցանիշ նախատեսած լինելով հանդերձ: Մինչդեռ այսօր առաջարկվում է տարեկան 450 հազար տոննա ցորենի արտադրություն, ինչի համար հարցի լուծման բավականին հասակ ու կարճ ուղիներ են առաջարկվում: բարձր բերքատու սերմացուի եւ պարարտանյութերի ներկրում, տեխնիկական միջոցների եւ ցանքատարածքների ավելացում: Մասնագիտական տեսանկյունից միայն ազոտական պարարտացումով ամեն տարի նման ցուցանիշ ունենալն արտադրում է: Մյուս կողմից էլ, եթե մինչեւ այս տարի պետությունը ճարտնական դրամաշնորհով տարեկան 18 հազար տոննա ազոտական պարարտանյութ էր ներկրում, ապա այս տարվանից դա դադարեցվել է: Փաստորեն, մի կողմից խոսում են ներկրումների ծավալների մեծացման մասին, մյուս կողմից հակառակն են անում:

Հաջորդ գործոնը ցանքերի տակ դրվելիք հողատարածքն է: Եթե ցանքերը մեծացնելու համար առաջնորդվելու են սովետական տարբերակով՝ բարձրանան սարերը, ապա խորհրդային տարիներին երկու անգամ արդեն ձախողվել են, իմաստ ունի՞ երրորդ անգամ գնալ այդ ճանապարհով: Եթե այդ գործին պետք է ոռոգվի դարձվի, ապա գործնականում անհնար է այդտեղ 1-2 տարում ոռոգման համակարգ կառուցել: Եթե դա արվելու է Արարատյան դաշտի հաշվին, ապա ընդամենը 10 տարի առաջ ժողովուրդն ինքնակամ հրաժարվեց ցորենից խիստ աննկատաբեր լինելու պատճառով: Մյուս կողմից՝ փոքրիշատե բարձր բերք հնարավոր է ստանալ միայն ոռոգվի հողերում: Իսկ դրանք Արարատյան դաշտում են եւ մասամբ նախալեռնային գոտում: Բայց տակի բոլորովին հացահատիկային շրջաններ չեն, եւ անլուրջ է դրանց անդրադառնալը:

Հերթական գործոնը բարձրորակ սերմացուն է, որը պետք է ներկրվի դրսից: Իսկ դա բավականին թանկ հաճույք է: Այնքան, որ խիստ կասկածելի է, թե գյուղացին կհամարձակվի գոնե 50-60 հազար հա-ի վրա նման սերմացու ցանել: Մյուս կողմից՝ միայն սերմացու ներկրելը բավարար չէ: Սերմարտադրություն չունենք, իսկ լուրջ սերմարտադրություն կազմակերպելը մեկ-երկու տարվա գործ չէ: Կնշանակի՝ ամեն տարի պետք է ներկրվի, ինչը սնտեսագիտության տեսանկյունից նույնպես արդարացված չէ, իսկ ամենամեծ խնդիրը, թերեւս, տեխնիկայի բացակայությունն ու եղածի մաշվածությունն է: Պատշաճական տվյալներով՝ այսօր հացի բերքի 12-17%-ը կորում է տեխնիկայի անսարքության պատճառով: Իրականում այդ թիվն ավելի մեծ է: Կնշանակի՝ 400 հազար տոննա հաց ունենալու համար նվազագույնը 450-500 հազար տոննա պետք է արտադրվի: Այդ դեպքում ոչ թե 30գ/հա, այլ 32-33գ/հա միջին բերք պետք է ապահովվի: Ինչպե՞ս: Շատ դժվար է ասել:

Պարենային անվտանգությունն, իհարկե, երկրի համար ռազմավարական նշանակություն ունի: Բայց նման ծրագրի իրականացումը պետք է ամենից առաջ հիմնավորված լինի սնտեսագիտական տեսանկյունից: Եթե խորհրդային Միությունում այլ էր, ապա այսօր ամեն ինչ հաշվարկվում է սնտեսագիտական արդյունավետության, շահութաբերության տեսանկյունից: Արդյոք սնտեսագիտորեն հիմնավորվա՞ծ է շուրջ 250 հազար հա տրամադրել հացահատիկի մշակմանը: Եվ դա կապահովի՞ այն շահույթը, որի համար գյուղացին հրաժարվի ավելի արդյունավետ մշակաբույսերից: Երեքս ոչ: Այնպես որ, այս իրավիճակում կարծես թե այնքան էլ լուրջ չէ հացի պահանջմունքը մեր հաշվին բավարարելու մասին բարձրացված խնդիրը, եւ խիստ կասկածելի է՝ այս ծրագրի իրականացումով ավելի շատ կշահե՞նք, թե՞ կկորցնե՞նք:

ԱՇՈՏ ԽՈՒՇՈՒՄՅԱՆ

«Եթե համագործակցեիք, ամեն ինչ կունենայիք Գեղարքունիքի մարզի զարգացման ծրագրի մասին»

2003 թ. Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Միջազգային զարգացման նախարարության (ՄԶՆ-DFID) գրասենյակի միջոցով մեկնարկել եւ իրականացվում է «Հայաստանի տարածաշրջանային զարգացման ծրագիր» Տավուշի եւ Գեղարքունիքի մարզերում: Ծրագիրն ավարտվելու է 2008 թ. դեկտեմբերին:

Ինչպես նշված է Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան պատասխանատու կայք-էջում, «ծրագրի նպատակն է՝ Տավուշի եւ Գեղարքունիքի մարզային իշխանություններին աջակցել աղքատության նվազեցմանն ուղղված ծրագրերի մշակման ու իրականացման, ինչպես նաեւ մարզային զարգացման հանրապետական հաղորդակցության վրա ազդեցություն գործելու կարողություններն ամրապնդելու գործում»: Ինչպես նախատեսված էր, այս ծրագրի նախապատրաստական փուլի աշխատանքների արդյունքում ՀՀ կառավարությունը 2005 թ. մարտի 31-ին որոշում ընդունեց «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի եւ Տավուշի մարզերի զարգացման ծրագրերը հաստատելու եւ դրանք կենսագործելու համար անհրաժեշտ միջոցառումների մասին»:

Քանի որ ծրագիրը ներառում է համայնքային զարգացման եւ տարածքային կառավարման բաղադրիչ, ցանկացած անդրադառնալ Գեղարքունիքի մարզի զարգացման ծրագրի շրջանակներում իրականացրած աշխատանքներին հենց այդ ոլորտներում: ՄԶՆ. «Հայաստանի տարածաշրջանային զարգացման ծրագրի» Գեղարքունիքի մարզի գրասենյակի ղեկավար Կորյուն Դանիելյանին ներկայացրինք մեզ հետաքրքրող հարցերի շրջանակը, այն է՝ համայնքային զարգացում, տեղական ինքնակառավարման ոլորտում մարզային զարգացման ծրագրի նախատեսած ու կատարած աշխատանքներ, դիտարկումներ, ծրագից առաջ եւ հետո Գեղարքունիքի մարզում տեղական ինքնակառավարման համակարգի կայացման մակարդակ եւ այլն:

Կ. Դանիելյանը նշեց, որ իրենք հիմնականում աշխատել են մարզպետարանի հետ, հետեւաբար մեզ հետաքրքրող հարցերի մասին ինքը չի կարող տեղեկություններ հաղորդել: Նա մասնավորեց Գեղարքունիքի մարզի զարգացման ծրագրով նախատեսված հիմնական միջոցառումներից միայն մեկը՝ «Միջհամայնքային միավորումներին ֆինանսական եւ տեխնիկական աջակցություն», որի համար ՄԶՆ (DFID)-ը 30 մլն դրամի հատկացում է նախատեսել: Պրն Դանիելյանին առաջարկեցինք զրուցել այն միջոցառումների մասին, որոնք նախատեսել եւ իրականացրել են իրենք, սակայն առաջարկս ակնհայտորեն դուր չեկավ նրան, ուստի կտրուկ հրաժարվեց հարցազրույց տալ իրենց հետ «չհամագործակցածներին», հրաժարվեց տրամադրել նաեւ ծրագրի հաշվետվությունները՝ «եթե համագործակցեիք, ամեն ինչ կունենայիք» պատասխանությամբ: Առաջարկեցի զրուցել համագործակցել-չհամագործակցելու մասին, սակայն այդ առաջարկը նույնպես մերժվեց:

Գեղարքունիքի մարզի ցանկացած բնակիչ, անկախ իր ունեցած հասարակական դիրքից, պարտավորված չէ համագործակցել հիշյալ ծրագրին իրականացնող գրասենյակի հետ, սակայն դա չի նշանակում, թե նա զրկված է իր մարզի զարգացման ծրագրի ընթացքի մասին իրազեկված լինելու իրավունքից: Առավել եւս, որ ծրագիրը հաստատել է ՀՀ կառավարությունը, եւ այն համահունչ է ԱՀՈԾ-ին: Ցարտեր, անշուշտ, այս հոդվածի շրջանակներում ներկել ՄԶՆ «Հայաստանի տարածաշրջանային զարգացման ծրագրի» Գեղարքունիքի գրասենյակի ղեկավարի դիտարկումը: Սակայն անհնար է նաեւ շրջանցել այդ հանգամանքը, քանի որ նման բնույթի ու մասշտաբի ծրագրի իրականացումը ենթադրում է հարաբերակցության պրակտիկայում, ինչը կհանգեցնի հանրության վստահության ձեւավորմանը: Տեղին է այս առումով հիշատակել Աղետների հաղթահարման ազգավարական ծրագրի եւ «Գարեգնաշենի մարտահրավերներ-Հայաստան» ծրագրի քարտ տեղեկությունների տեղադրումն իրենց ինտերնետային կայքէջերում ու, հատկապես, կայանալիք լուսանկյուր միջոցառման մասին էլեկտրոնային փոստով տեղեկությունների տարածման մեթոդի կիրառումը:

Մինչդեռ չորսեկես տարի աշխատող եւ մարզային նշանակության ծրագիր իրականացնող գրասենյակը գործունեության նշված ժամանակահատվածում աչքի չի ընկել հրապարակային ու թափանցիկ գործելակերտով: Ծրագիրը չունի ինտերնետային կայքէջ, առանց որի դժվար է պատկերացում կազմել նման մասշտաբի ծրագրի մասին: Դժվար թե դա պայմանավորված լինի համապատասխան ֆինանսական միջոցների բացակայությամբ: Իհարկե, գաղտնի չէ, որ դեսպանատների, միջազգային կազմակերպությունների ծրագրերը մեզանում աչքի չեն ընկնում հրապարակայնությամբ ու թափանցիկությամբ, սակայն Գեղարքունիքի մարզի 92 համայնքների գոնե հասարակայնորեն ակտիվ հատվածին այդ հանգամանքը չի կարող սփոփել: Ծրագրի մեկնարկից ի վեր այդպես էլ պարզ չդարձավ, թե ինչպես եւ ումն որոշմամբ ձեւավորվեցին մարզային զարգացման ծրագրի մշակմանը մասնակից աշխատանքային խմբերը, ինչպես եւ ումն որոշմամբ ձեւավորվեց մարզային զարգացման հանձնաժողովը, որի առաքելությունը մարզի զարգացման ծրագրի տարեկան աշխատանքային պլանների եւ տարեկան բյուջեների նախագծերի քննարկումն է: Պարզ չէ նաեւ, թե ինչպես եւ ովքեր են իրականացնում մարզային զարգացման ծրագրի ընդհանուր մոնիտորինգը: Դրանից բացի՝ «Հայաստանի տարածաշրջանային զարգացման ծրագրի» մարզային գրասենյակներին հատկացվել են գումարներ ծրագրային աշխատանքների իրականացման համար, ինչի մասին նույնպես որեւէ տեղեկություն մեզ չհաջողվեց հայթայթել:

Ծրագրի իրականացման ընթացքի մասին, որքանով որ մեզ հաջողվեց պարզել, նյութեր են տեղադրվել ու ներկայացվել մարզի «Գեղամա աշխարհ» թերթում, Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոնի «Հայաստ տնտեսությունը» տեղեկագրում, «Հ2» եւ տեղական հեռուստաալիքներով, ՀՀ տարածքային կառավարման նախարարության եւ http://gegharkunik.region.am ինտերնետային կայքէջում: Նյութերի հիմնական մասը, անկախ մատուցման ժանրից, կում են շնորհանդեսային բնույթ եւ ունեն մարքեթինգային, PR ուղղվածություն: Տանկացած հետաքրքրված կողմ սփոփված է գտնանալ վերոհիշյալ ծրագրի մասին սուղ տեղեկություններով, որոնք սեռ-սեռ շրջանառում են ծրագրի պատասխանատուները: Առված լուսաբանումները, բացի «Գեղամա աշխարհ» թերթում ներկայացված մարզային զարգացման ծրագրի տարեկան հատկացումների աղյուսակներից, չունեն հաշվետու բնույթ եւ պատրաստված են ծրագիրն իրականացնող կողմերի ու համագործակիցների գիտությամբ ու մասակով: Տարբեր աղբյուրներում տեղ գտած տեղեկությունները հանրությանը մատուցվում են ընտրողաբար. ընտրվում են թե՛ մատուցվելիք տեղեկությունները, թե՛ տեղեկություններ տրամադրող ՁԼՄ-ները:

Այդ մոտեցմանը, հավանաբար, հակասում էր «Հետի» հետաքրքրությունը: Ինչպես պարզվեց, «Հետը» «համագործակիցներից» չէր եւ առանց նման կարգավիճակի փորձ էր անում իր նախաձեռնությամբ անդրադառնալ ծրագրի աշխատանքներին:

Ցանկացած լրատվամիջոց կարող է եւ իրավունք ունի անդրադառնալու ցանկացած ծրագրի իրականացման ընթացքին՝ ուսումնասիրելով այդ ծրագրի հաշվետվությունները, սակայն մեր ուսումնասիրած որեւէ աղբյուրում դրանք չհայտնաբերվեցին:

Անդրադառնալով «Հայաստանի տարածաշրջանային զարգացման ծրագրի» մոնիտորինգին եւ գնահատմանը՝ հույս կարելի է ՀՀ տարածքային կառավարման նախարարության ինտերնետային կայքէջին, որտեղ իրավաչափորեն նշված է. «Ցանկացած ծրագրի հաջող իրականացման նախադայմանը արդյունավետ մոնիտորինգի ու գնահատման համակարգն է»: Արդյոք նույն տեղում ասվում է, որ «Գեղարքունիքի եւ Տավուշի մարզերում ստեղծվել ու արդեն լիարժեք գործում են Մոնիտորինգի եւ գնահատման (ՄԳ) խմբերը, որոնց անդամները մարզպետարանների ոլորտային ստորաբաժանումների ղեկավարներն են:

Զարմանալի է, սակայն դժվար է ակնկալել արդյունավետ եւ անաչառ մոնիտորինգ ու գնահատում մարզպետարանների ոլորտային ստորաբաժանումների ղեկավարներից, քանի որ «Հայաստանի տարածաշրջանային զարգացման ծրագրի» արդյունքներն ամենից առաջ նկատելի են հենց մարզպետարանի վերանորոգման ու տեխնիկական վերազինման աշխատանքների միջոցով: Բացի այդ, որքանով են մատչելի ու բաց մոնիտորինգի եւ գնահատման կիսամյակային եւ տարեկան հաշվետվությունները Գեղարքունիքի մարզի յուրաքանչյուր բնակչի համար, որտե՞ղ են դրանք հրապարակվում եւ, վերջապես, ումի համար են պատրաստվում՝ դոնորի՞, թե՞ քաղաքացու, հանրության համար: Սակայն ՄԳ հանձնաժողովի երրորդ բաղադրիչը հենց հիշյալ հարցին է պատասխանում: «Գեղամա աշխարհ» թերթի 01.01.2008 թ. համարում նշվում է, որ մասնակցային մոնիտորինգը եւ գնահատումը 2006 եւ 2007 թթ. «իրականացվում է մարզում գործող հասարակական կազմակերպությունների կողմից, որոնց ընտրությունն այս անգամ կատարվել է մրցութային կարգով»: Սա թույլ է տալիս ենթադրել, որ 2006 թ. ՀԿ-ների ընտրությունը մրցութային կարգով չի կատարվել: Ինչո՞ւ: Կամ՝ ինչպե՞ս է կատարվել 2007 թ. ընտրությունը, որի առթիվ տեղի ունեցած մրցույթի մասին կրկին հիշատակումներ չգտանք:

Հարկ է նշել, որ 2 մարզերի զարգացման ծրագրերը ՀՀ կառավարությունում հաստատվելուց հետո «Հայաստանի տարածաշրջանային զարգացման ծրագրի» երկրորդ փուլի շրջանակներում Մեծ Բրիտանիայի Միջազգային զարգացման նախարարությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 2 մլն ֆունտ ստեռլինգ (1 մլն յուրաքանչյուր մարզի համար)՝ որպես մարզային զարգացման ծրագրերի իրականացման համար սկզբնական ներդրումային գումար: ՀՀ տարածքային կառավարման նախարարության ինտերնետային կայքէջի տեղեկությունների համաձայն՝ «2005 թ. սեպտեմբերին ՄԶՆ-ի եւ ՀՀ կառավարության միջեւ կնքվել է Բյուջետային աջակցության եւ ֆինանսական հոսքերի կառավարման մասին Փոխըմբռնման հուշագիր, որով սահմանվում են գումարը 5 մասնաբաժնով (տրանշով) հատկացնելու մեխանիզմները: ՄԶԾ-ներով սահմանված միջոցառումների ֆինանսավորման համար պետական բյուջեի միջոցով արդեն փոխանցվել է դրամաշնորհի 2 մասնաբաժինը՝ 400 000 եւ 500 000 ֆունտ ստեռլինգ»:

Սակայն անկախ հրապարակայնության պակասից, նշենք, որ «Հայաստանի տարածաշրջանային զարգացման ծրագրի» մշակած եւ իրավական ուժ ստացած «Գեղարքունիքի մարզի զարգացման ծրագիրն» արժեքավոր է: Մարզի զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 40 մլրդ դրամ: «Հայաստ տնտեսությանը» տեղեկագրի 2005 թ. նոյեմբերի թիվ 33 համարում տեղ գտած հարցազրույցում ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, ծրագրի համակարգող Արտուր Ղուկասյանը պարզաբանում է, թե ինչպես է հայթայթվելու նախատեսվող 40 մլրդ դրամը. «Ներդրվող գումարների մեջ պետբյուջեի վրա հազիվ 10 %-ն ծանրություն է ընկնելու, որը հիմնականում ծախսվելու է դպրոցաշինության եւ ճանապարհաշինության վրա: Իսկ մնացած 90 %-ը պետք է ներդնեն Հայաստանում գործող միջազգային դոնոր կազմակերպությունները՝ գյուղատնտեսության ծառայության ծրագիրը, Սոցիալական ներդրումների հիմնադրամը, «Փրկեմ երեխաներին» կազմակերպությունը, Համաշխարհային բանկը, «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագիրը, Մեծ Բրիտանիայի միջազգային զարգացման նախարարությունը, որն արդեն 1 մլն ֆունտ ստեռլինգ է ներդրել»:

Այս հրապարակման նպատակը ծրագրի՝ համայնքային զարգացման եւ տարածքային կառավարման բաղադրիչին անդրադառնալն էր՝ համայնքային զարգացման հիմնական ուղղություններին, ներկա իրավիճակի վերլուծությանն ու հիմնախնդիրներին, համայնքային զարգացման նպատակներին եւ ռազմավարությանը, որտեղ, մասնավորապես, անդրադարձ է արված տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանը, տեղական ինքնակառավարման ոլորտում կառավարման հմտությունների եւ ունակությունների բարձրացմանը, ինչպես նաեւ սահմանված են միջոցառումներ: Ծրագրի հիմնական միջոցառումներն ի մի են բերված աղյուսակային տեսքով եւ նշված են դրանց իրականացման համար անհրաժեշտ գումարները: Դրանք արժանի են առանձին լուսաբանման, սակայն դժվար է անդրադառնալ այդ միջոցառումներին, երբ ծրագրի իրականացման պատասխանատուները չեն ցանկանում տեղեկատվություն տրամադրել: Մինչդեռ Գեղարքունիքի մարզի զարգացման ծրագրի հեղինակների ընթացքում ակնկալվող հիմնական արդյունքներից մեկը «հանրային կառավարման համակարգում հրապարակայնության, թափանցիկության եւ հաշվետվողականության սկզբունքների արմատավորումը, հաղորդակցական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացումը, բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացումն է»:

ԼՈՒՍԻՆԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Նյութը հրատարակվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) աջակցությամբ, որի բովանդակության համար պատասխանատու է «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ն: Այստեղ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ համընկնեն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին:
USAID FROM THE AMERICAN PEOPLE
EURASIA PARTNERSHIP FOUNDATION

«ԱՄՆ-ում դուք արդեն տանուլ եք տվել Հայկական հարցը»

Հիշեցնում է Թուրքիայում ԱՄՆ նախկին դեսպան Մորթոն Աբրամովիցը

ԱՄՆ նախագահի պաշտոնում Դեմոկրատական կուսակցության թեկնածու Բարաք Օբաման Իլինոյս նահանգի հայերին հղած նամակում Հայոց ցեղասպանությունը ճանաչելու խոսում է տվել: Խորհրդականներն զգուշացրել են Օբամային, որ ճանաչման հարցը լուրջ ոիսկ է պարունակում, ուստի ինքը չպետք է նախապես պարտավորություն ստանձնի: Սակայն Օբաման պատասխանել է. «Այդ հարցն ինձ համար փակված է, չեմ կարող դրժել խոսումս»:

Նշելով այդ մասին հունիսի 11-ի համարում, թուրքական «Ենի Շաֆաք» թերթը գրում է, որ նախորդ օրը Թուրքիայի արտգործնախարար Ալի Բաբաջանը հանդիպել է Օբամայի խորհրդականները Էնթոնի Լայքի եւ Ֆրիլ Գորդոնի հետ, ինչպես նաեւ նախագահի դեմոկրատ թեկնածուի, հայերին ուղած խոսքը: Խորհրդականները Բաբաջանին ասել են, որ նախագահ ընտրվելու դեպքում Օբաման հավանաբար կկատարի իր խոսքը, հետեւաբար Թուրքիան պետք է պատրաստ լինի դրան եւ ունենա հակազդեցության երկրորդ ծրագիր:

Օբամայի խորհրդականներին ինչ արձագանք է տվել Թուրքիայի արտգործնախարարը՝ «Ենի Շաֆաք» չի նշում: Փոխարենը գրում է, որ մեկ շաբաթ Վաշինգտոնում բանակցություններ վարող Բաբաջանը միաժամանակ հանդիպել է Հիլարի Քլինթոնի խորհրդական Մայքլ Օշրայթի, ինչպես նաեւ Ջոն Մակքեյնի խորհրդականների հետ, որոնց թվում է, ի դեպ, Հենրի Քիսինջերը:

«Ենի Շաֆաքին» արձագանքի առումով լրացնում է «Թերջումանը», տեղեկացնելով. «Արտգործնախարար Բաբաջանը հանդիպումներում ընդգծեց Հայկական հարցը որպես խոչընդոտ թուրք-ամերիկյան հարաբերությունների հարթությունից դուրս մղելու անհրաժեշտությունը»:

Հայոց ցեղասպանությունը ճանաչելու Օբամայի խոսքերի հավանականության պարագայում Թուրքիայի խնդիրը, ինչպես երեւում է, սոսկ վերջինի խորհրդականների ասածները չեն: Դրանց հնարավոր կատարման մասին նույն «Թերջումանում» արահայտվել է նաեւ Ռազմավարական հետազոտությունների միջազգային հասարակության տնօրեն Սեդաթ Լայինը: Նա, ԱՄՆ առաջիկա նախագահական ընտրությունները թուրք-ամերիկյան հարաբերությունների տեսանկյունից գնահատելիս, ուշադրություն է հրավիրել այն հանգամանքի վրա, որ ԱՄՆ-ում հայկական լոբբիին առավելապես աջակցում են դեմոկրատները, արդա եւ ավելացրել. «Թուրք-ամերիկյան հարաբերությունների նորմալ ընթացքի դեպքում կարելի է հեշտությամբ կանխել Հայկական հարցին առնչվող զարգացումները: Սակայն հարաբերությունները ամենափոքր տարաձայնությունն անգամ կտակի վրա յուղ լցնելու ազդեցություն կգործի եւ կբուսավառի Հայկական հարցի հրդեհը»:

Այնուհետեւ Լայինն ընդգծել է. «Եթե ընտրություններում հաղթի, արդա Օբաման ԱՄՆ-ում կդառնա 1915-ի իրադարձություններն իրեն «ցեղասպանություն» բնութագրող առաջին նախագահը» (Լայինը սխալվում է, նախագահ Ռոնալդ Ռեյգանը 1981-ին ճանաչել է դրանք): Նա դրանով մեկ անգամ եւս ակնարկել է, որ նախագահի պատասխանում Հանրապետական կուսակցության թեկնածու Ջոն Մակքեյնի ընտրությունը գերադասելի է Թուրքիայի համար: Ի դեպ, այդ կարծիքը լայն տարածում ունի երկրի ինչպես հաղթական, այնպես էլ հասարակական շրջանակներում: Դրանում համոզվելու համար կարելի է անդրադառնալ Բուշ ավագի պատասխանավարման տարիներին Թուրքիայում ԱՄՆ դեսպանի ադրոն զբաղեցրած Մորթոն Աբրամովիցի հետ «Աֆտա» թերթի հունիսի 11-ին հրապարակված հարցազրույցին:

Թղթակիցն Աբրամովիցին է դիմում. «Թուրքիայում տարածված է այն կարծիքը, թե ԱՄՆ-ի հետ հարաբերությունները բարելավվում են, երբ իշխանության են գալիս հանրապետականները: Համաձայնած այս կարծիքը վերջին անգամ «հայկական բանաձեւի» առնչությամբ վերահաստատեց վարչապետ Էրդողանը»: Ահա թե ինչ է պատասխանում Աբրամովիցը. «Ես բոլորովին համամիտ չեմ այդ կարծիքին: Դեմոկրատների իշխանության պարագայում Թուրքիային պետք է մտահոգի հենց Հայկական հարցը, որովհետեւ նրանք հայտարարեցին, որ ճանաչում են «ցեղասպանությունը»: Սակայն դա դեռ ցեղասպանության բանաձեւերին աջակցել չի նշանակում: Արդեն դուք Հայկական հարցը տանուլ եք տվել ԱՄՆ-ում: Հայկական թեզերն արժանանում են լայն շրջանակների հավանությանը: Իշխանությունները՝ դեմոկրատական կլինեն, թե հանրապետական, ի վիճակի չեն փոխելու իրերի դրությունը»:

Աբրամովիցն «Աֆտամի» հարցերին պատասխանելիս միաժամանակ ասում է, որ Թուրքիան Մեծավոր եւ Միջին Արեւելքում դեռակատար չէ, որովհետեւ նեղկայություն չունի Իրանում, չի կարող տեղ զբաղեցնել տարածաշրջանային որոշումների կայացման մեխանիզմում, հազիվ թե ի վիճակի լինի հարցեր լուծելու տարածաշրջանում, այլ ընդամենը կարող է նպաստել դրանց լուծմանը, ԱՄՆ-ում պահպանողական որոշ շրջանակներ հիրավի չեն վստահում վարչապետ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությանը:

Նա դրանով հաստատում է, որ թուրք-ամերիկյան տարաձայնությունները հայկական բանաձեւերով չեն սահմանափակվում: Այդ ընթացքում անուղղակի հիմնավորվում է Սեդաթ Լայինների «Հայկական հարցի բոցավառման» մտավախությունը եւ դրա պայմանավորումն ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններում թեկուզ աննշան անհարթությամբ:

ՀՐԱՆՏ ՉԱՔԱՐՅԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Մզկիթի կառուցման դիմաց՝ Տարսոնի եկեղեցին

Կաթոլիկ եկեղեցու առաջնորդները խոստացել են աջակցել Գերմանիայում մզկիթի կառուցմանը, եթե թուրքական կառավարությունը հաճանչի Տարսոնի Ս. Պողոս եկեղեցին դնել էրիստոնեական վերահսկողության տակ եւ թույլատրել ուխտագնացություն այնտեղ: Այս մասին, ըստ «Անդինյն միտ սփեթիթ» շաբաթաթերթի, հայտարարել են «Ռելիջս ինսթիթյուշն» կազմակերպության անդամները Լոնդոնից: Խորհնալ խոակիմ Մեյսներ՝ Քյոլնի արեթիսկոպոսը թեմական իր թերթում գրել է, որ այդ մասին Թուրքիայի վարչապետ Էրդողանին տեղյակ են պահել եւ պահանջել, որ համաձայնություն թույլեր ձեռնարկի այդ առնչությամբ:

Եկեղեցին, որ նախապես հայկական է եղել, բյուզանդական է հանդիսանում, իսկ 1920-ականներից սկսած օգտագործվել է որպես գինանոց:

Թուրք կառավարության զեկուցագրում Տարսոնում էրիստոնյաներ չգտնվում: Քրիստոնեական հաստատությունները պահպանում են այնտեղ «Եվասը պահպանում են այնտեղ «Եկեղեցու դուստրերի» կաթոլիկական միաբանության երեք իտալացի «Ֆոյերը» եւ մոտակայքում գտնվող ամերիկյան բազայի օդաչուները:

«Ողջունելի կլիներ Թուրքիայի այդ քայլը: Դա կնշանակեր, որ Գերմանիայում ընդունեին թուրքերի առաջարկած մզկիթի շինարարությունը», «Շպիգել» պարբերականին ասել է Համբուրգի եպիսկոպոս Հանս-Յոխեն Յայկեն, որը կաթոլիկ եկեղեցու միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչն է:

Հ. Ե.

Հունաստանը միացավ Լիսաբոնի պայմանագրին

Հունաստանի խորհրդարանը հավանություն է տվել, այսպես կոչված, Լիսաբոնի պայմանագրին, որը Եվրոմիության սահմանադրության մեծքվաթ նախագծի նոր, պարզեցված տարբերակն է:

Այսպիսով, Եվրոմիության 27 պետություններից 18-ն արդեն դրականորեն են արտահայտվել պայմանագրի առնչությամբ: Ֆրանսիայում գործակալությունը նշում է, որ եթե մինչեւ տարեվերջ մնացյալ 9 երկրներ ես հավանություն տան փաստաթղթին, ապա այն ուժի մեջ կմտնի 2009-ի հունվարի 1-ից:

Ինչ վերաբերում է Հունաստանի խորհրդարանի քվեարկության մանրամասնություններին, կառավարող «Նոր ժողովրդավարություն» պահպանողական կուսակցության 250 պատգամավորներ քվեարկել են պայմանագրի օգտին, իսկ կոմունիստական, ազգայնական եւ այլ կուսակցությունների 42 պատգամավորներ դեմ են արտահայտվել եւ առաջարկել են փաստաթղթը դնել հանրաքվեի:

Լիսաբոնի պայմանագիրն ստորագրել էր, երբ Ֆրանսիայի եւ Հոլանդիայի հաղթահարները դեմ էին դիմում հաղթահարներին դեմ էին դիմում. «Թուրքիայում տարածված է այն կարծիքը, թե ԱՄՆ-ի հետ հարաբերությունները բարելավվում են, երբ իշխանության են գալիս հանրապետականները: Համաձայնած այս կարծիքը վերջին անգամ «հայկական բանաձեւի» առնչությամբ վերահաստատեց վարչապետ Էրդողանը»: Ահա թե ինչ է պատասխանում Աբրամովիցը. «Ես բոլորովին համամիտ չեմ այդ կարծիքին: Դեմոկրատների իշխանության պարագայում Թուրքիային պետք է մտահոգի հենց Հայկական հարցը, որովհետեւ նրանք հայտարարեցին, որ ճանաչում են «ցեղասպանությունը»: Սակայն դա դեռ ցեղասպանության բանաձեւերին աջակցել չի նշանակում: Արդեն դուք Հայկական հարցը տանուլ եք տվել ԱՄՆ-ում: Հայկական թեզերն արժանանում են լայն շրջանակների հավանությանը: Իշխանությունները՝ դեմոկրատական կլինեն, թե հանրապետական, ի վիճակի չեն փոխելու իրերի դրությունը»:

Աբրամովիցն «Աֆտամի» հարցերին պատասխանելիս միաժամանակ ասում է, որ Թուրքիան Մեծավոր եւ Միջին Արեւելքում դեռակատար չէ, որովհետեւ նեղկայություն չունի Իրանում, չի կարող տեղ զբաղեցնել տարածաշրջանային որոշումների կայացման մեխանիզմում, հազիվ թե ի վիճակի լինի հարցեր լուծելու տարածաշրջանում, այլ ընդամենը կարող է նպաստել դրանց լուծմանը, ԱՄՆ-ում պահպանողական որոշ շրջանակներ հիրավի չեն վստահում վարչապետ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությանը:

Նա դրանով հաստատում է, որ թուրք-ամերիկյան տարաձայնությունները հայկական բանաձեւերով չեն սահմանափակվում: Այդ ընթացքում անուղղակի հիմնավորվում է Սեդաթ Լայինների «Հայկական հարցի բոցավառման» մտավախությունը եւ դրա պայմանավորումն ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններում թեկուզ աննշան անհարթությամբ:

ՀՐԱՆՏ ՉԱՔԱՐՅԱՆ

ՅՈՒԼՈՒՍ

Կանադայի վարչապետը ներողություն խնդրեց հնդկացիներից

Կանադայի վարչապետ Սթիվեն Հարպերը պատասխանատու ներողություն է խնդրել երկրի բնիկներից՝ հնդկացիներից, որոնք տուժել են իրենց համար գործած գիշերթիկ դպրոցների համակարգից:

«Ցավալի այդ հաղթականությունը սխալ էր: Այն հսկայական վնաս պատճառեց եւ տեղ չունի մեր երկրում», ասել է վարչապետը, որի խոսքերը մեջբերում է Ֆրանսպրես գործակալությունը:

Խորհրդարանում ելույթ ունենալով, Հարպերը մասնավորապես Կանադայի կառավարության եւ ժողովրդի անունից ներողություն է խնդրել բնիկներից «հնդկացիական գիշերթիկ դպրոցների համակարգում Կանադայի խաղացած դերի համար»: Միաժամանակ նա «խորին ափսոսանք» է հայտնել:

1874-ից Կանադայի տարածքում կազմակերպված 132 գիշերթիկ դպրոցներում տեղավորում էին հնդկացիների, էսկիմոսների զավակներին, ինչպես նաեւ խառն ամուսնություններից ծնված երեխաներին, որպեսզի «քրիստոնեացնեն եւ քաղաքակրթեն» բնիկներին:

Գիշերթիկները ղեկավարած քրիստոնեական եկեղեցիների ներկայացուցիչները երեխաներին ներշնչում էին, թե նրանց ազգային մշակույթը եւ կրոնական հավատալիքները վնասակար են: Սաներին արգելում էին խոսել մայրենի լեզվով: Որոշ տեղեկություններ համաձայն, երեխաներն այդ դպրոցներում ենթարկվել են ոչ միայն հոգեբանական, այլեւ սեռական բռնությունների:

1996-ին կառավարական հանձնաժողովը եզրակացրեց, որ գիշերթիկների համակարգը անուղղելի վնաս է հասցրել բնիկների շատ սերունդների եւ նրանց մշակույթին: Իշխանությունների հաշվարկների համաձայն, այդ դպրոցներում սովորել է մոտ 150 հազար մարդ:

Դրանց նախկին սաներին փոխհատուցում վճարելու նպատակով կազմակերպված է հատուկ հիմնադրամ, որի ընդհանուր գումարը 1,9 մլրդ ամերիկյան դոլարի համարժեքն է:

Պենսագոնը ղակիստանցի զինվորների սպանությունն «արդարացրեց» ինքնաթաշտանությամբ

Պակիստանի լեռնային շրջաններում ամերիկյան օդուժի հարվածների հետեւանքով պակիստանցի 11 զինծառայողների սպանությունը Պենսագոնում գնահատել են որպես «օրինական գործողություն եւ ինքնապաշտպանության միջոցառում», հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը: Վերջինիս տվյալներով, ամերիկյան կողմը դեռ մինչեւ վերջ չի պարզել միջադեպի մանրամասնությունները:

Նախնական տեղեկությունների համաձայն, ամերիկյան ուժերը ծրագրել էին հունիսի 10-ին հարվածել «Թալիբան» շարժման մարտիկներին, բայց սխալմամբ թիրախ էին դարձրել պակիստանցի զինվորականներին: Մինչդեռ պակիստանյան աղբյուրները պնդում են, որ աֆղան եւ օտարերկրացի զինվորականները փորձել են սեփական պահակակետ ստեղծել լեռներում գտնվող մի վիճակի տեղամասում, իսկ պակիստանցիները նրանց կարգադրել են հեռանալ: Այդ ժամանակ իբր ծավալվել է փոխհրաձգություն, եւ ամերիկացիները դիմել են սեփական օդուժի օգնությանը:

Միջադեպի կապակցությամբ Պակիստանի արտաքին հայտարարության մեջ ասվում է, որ ամերիկացիների հարվածը եղել է «չհարիրված եւ վախկոտ քայլ»: Պակիստանում ԱՄՆ-ի դեսպան Էնն Պատերսոնին կանչել են արտգործնախարարություն, որտեղ նրան բողոքի նոտա են հանձնել: «Պակիստանյան սահմանամերձ պահակակետերի դեմ օդուժի անխոհեմ օգտագործումը միանգամայն անընդունելի է: Դա բացահայտ եւ կանխամտածված ժխտումն է այն հսկայական զոհողությունների, որոնք Պակիստանը կրել է ահաբեկչությանը հաղթելու նպատակով», նշել է երկրի արտգործնախարար Սալման Բաշիրը:

Իսկ պակիստանցի զինվորականների հրապարակած հայտարարությանը մեջ ընդգծվում է, որ տեղի ունեցած միջադեպը տպարնում է հակահաբեկչական պայքարում Պակիստանի եւ Արեւմուտքի համագործակցությանը:

Փնտրվում է 16 մլրդ վաստակած Բրունեյցի նախկին նախարարը

Մեծ Բրիտանիայի իրավապահ մարմինները որոնում են Բրունեյի սուլթան Հասանալ Բոլկիահի եղբորը՝ իշխան Ջեֆրիին: Հիմնավոր կասկածներ կան, որ նա Բրունեյի ֆինանսների նախարարի պաշտոնը զբաղեցրած ժամանակ վաստակել է գրեթե 16 մլրդ դոլար: Այդ մասին տեղեկացնում է Լոնդոնի «Թայմս» թերթի կայքէջը:

Բրունեյի սուլթանը եղբորից պահանջում է վերադարձնել «ընդամենը» մոտ 6 մլրդ դոլար:

53-ամյա Ջեֆրին ունի 4 կին եւ 17 զավակ: Նա հռչակվում է խոստանալ, որ խախտել է օրենքը: Իշխան Ջեֆրին պնդում է, թե ինքը պետության միջոցները տնօրինելու լիակատար իրավունք է ունեցել:

Հակառակ պնդումն է անում Բրունեյի ներդրումների գործակալությունը, որի իրավաբաններն առայժմ աշխատում փորձում են վերահսկողության տակ առնել փախստական իշխանի միջոցները:

Ջեֆրի ձերբակալության հրամանն արձակվեց, երբ նա բրիտանական դատարան չներկայացավ իր գործի լսումներին ներկա գտնվելու: Իշխանի փաստաբանը չկարողացավ դատարանին պարզորոշ բացատրել, թե որտեղ է գտնվում իր հովանավորյալը: Իրավաբանի խոսքերով, Ջեֆրին հավանաբար Ֆրանսիայում է, բայց կարող է լինել նաեւ Մոնակոյում:

Թեեւ Ջեֆրին շարունակում է վերահսկել իր վիթխարի կարողության մեծ մասը, Բրունեյի սուլթանի իրավաբաններին հաջողվել է դատական կարգով իշխանից հետ սանձել Նյու Յորքի Palace հյուրանոցը: Ներկայումս պայքար է ծավալվել Bel-Al հյուրանոցի սեփականության իրավունքի համար:

«Կրեմլյովսկի բալետը» Հայաստանում էր

Ռուսական բալետի համաշխարհային մակարդակում գեղակա, թելադրող դերը վաղուց առդարացված է գեղարվեստական բարձրակեցում լինելով եւ դասականությունը առիկանից չկտրելով ու չաղճատելով, այդ բարձրակեցն ավելի վեր տանելով: Երեկ հայ հանդիսատեսը հնարավորություն ունեցավ համոզվելու դրանում: Հ. Պարոնյանի անվ. երաժշտական կոմեդիայի թատրոնում հանդես եկավ «Կրեմլյովսկի բալետ» թատրոնը փոքր կազմով: Այցը նաեւ փոքրնական է՝ ցարզելու մեծամասնաբ ներկայացումներով Հայաստանում հանդես գալու հնարավորությունները, իսկ ցանկություն, թատրոնի գեղարվեստական ղեկավար Անդրեյ Պետրովի հավաստմամբ, կա: Սակա է նաեւ երկու երկրների մշակութի նախարարությունների աջակցությունը, որի շնորհիվ էլ «Կրեմլյովսկի բալետը» Հայաստանում է «Ռուսական մշակույթի սեզոններ» ծրագրով: Թատրոնի երկացանկում 20 ներկայացում կա այսօր. «Մեր դահլիճն ամենամեծն է ողջ Եվրոպայում եւ 6 հազարանոց դահլիճը հիմնականում լեփ լեցուն է լինում՝ տպահանջը եւ բեմի, եւ հասարակության հենց մեծամասնաբ

Անդրեյ Պետրովը

Ասվածի գործուն եւ վառ ապացույցը հենց «Ռուսական մշակույթի սեզոններ» ծրագիրն է, որ իրականացվում է ՀՀ մշակույթի նախարարության եւ ՌԴ մշակույթի ու կինեմատոգրաֆիայի դաշնային գործակալության միջեւ մշակույթի բնագավառում 2006-2008 թթ. համագործակցության մասին» ծրագրի շրջանակում, որում «Կրեմլյովսկի բալետի» հյուրախաղերը 4-րդն են: Նախորդել են Սմեխովի այցը, Ֆոմենկոյի թատրոնի հյուրախաղերն ու Թարիվերդիեւի հոբելյանական համերգները: Իսկ «Կրեմլյովսկի բալետը» երեւանում ներկայացրեց «Քնած գեղուհին», «Կարաֆի լիճը», «Շչելկունչիկ», «Էսմերալդա», «Դիմակահանդես Վենետիկում», «Դոն Քիհոթ» բալետներից հատվածներ եւ այլ պարային բեմադրություններ: Գալա-համերգին հանդես են գալու Ռուսաստանի վաստակավոր արտիստներ Նատալյա Բալախնիչեւան, Այդար Շայդուլինը, Ինեսա Բիբրուլատովան, միջազգային եւ համառուսաստանյան մրցույթների դափնեկիրներ Միխայիլ Մարտինյուկը, Ալիյա Խասենովան եւ այլք: «Կրեմլյովսկի բալետի» ավագ բալետմայստերն է ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Եկատերինա Մախմոդովան, գլխավոր տնօրենները՝ Ռուսաստանի ժողովրդական արտիստներ Անդրեյ Պետրովը եւ Պյոտր Շաբոլտասը:

Ասուլիսի ավարտին «Կրեմլյովսկի բալետի» գեղարվեստական ղեկավար Անդրեյ Պետրովն ընդգծեց, որ թատրոնի ու խաղարկան այրերը չեն անտեսում մեր երկրների միջեւ մշակութային կապերի զարգացումը, սակայն փոքր-ինչ թերագնահատում են դրանց դերակատարությունը:

Մի տեսնելը հարյուր անգամ լսելուց գերադասելի է

Կազմակերպիչներն էլ, մեղմ ասած, թերագնահատում են գեղագիտական բարձրաժեք ներկայացումների, համերգների հանդիսատես-ունկնդրի շարքում լրագրողների ներկայությունն ու միաժամանակ պնդում, որ լրատվամիջոցներն անտեսում են ոչ միայն իրենց ջանքերը, այլեւ կենտրոնանում են զուտ ճաշակագոտկը դասակարգելու խնդրի վրա: Այդ, լրատվամիջոցները հրավիրատոմս չէին սացել: Մինչդեռ նշյալ թերագնահատումը մեծ բացթողում է հենց իրենց՝ կազմակերպիչների համար, որոնցից գոնե հայկական կողմն ամեն հարմար առիթով ինքնակում է մշակութային արժեքների զարգացման խնդիրն ու հայեցակարգեր մշակում, պնդում, որ հարկ է հասարակության գեղագիտական ճաշակը հոկել ու վերին ոլորտներ բերել: Այդ դեպքում բարի եղեր չանտեսել ամենաուղիղ ճանապարհը՝ համագործակցությունը լրատվամիջոցների հետ ոչ միայն ասուլիսի մակարդակում:

ՆԻՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Անթիկա Ոսկանյան՝ խնկելի անուն

Անթիկա Մինասի Ոսկանյանի պատերը ծնվել էին առասպելական Սասունում, Ծովասար լեռնակարկառի սառուցին, ուր Դավթի բեղերի եւ դրանց պարիսպների ահասարսուռ ավերակները դեռ մնում էին: Դրա համար էլ գլուխը կոչվում էր Բերդամ: Ոսկանյան իշխանական գերդաստանի տարեգրությունը հյուսվել էր թուրքերի ու էրդերի դեմ մղված անձնազոհ մարտերով եւ փառավոր հաղթանակներով: Հերթական սխրանքի նեսվելուց առաջ, որպես հաստատուն օրենք, գերդաստանի պայազատները ջրդեղվում էին խորընկա Ծովասարի աստղաբիր լճում, այսպես զրահավորվում: Իսկ եթե զոհվում էին, նրանց վրա սգում էին միայն Ծովասարի սեւսիրտ կակաչները: Այդպես նահատակների հոգիները հրաբաղեղ հավերներ էին դառնում եւ հավերժ թեւառում Սասնա տարերի վրա: Հորեղբայր Մանուկի վեց որդիների եւ խանդութ դստեր վրա այդ կակաչները սպացին 1915-ին: Կռիվն աչխարհավեր էր, անհավասար էր, եւ Բերդանը զարկելով ու զարկվելով նահանջեց: Ոսկանյան սասնաբին տոհմի բեկորները արտասանեցին Արեւելյան Հայաստանում, Արագած լեռան հարավային փեղի մի հարասանում, որին ցավով ու գերությամբ կոչեցին Սասնաբեն վերին, ուր ծնվեց եւ հասակ առավ Անթիկան: Ավարեց Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, հայոց լեզու էր դասավանդում տեղի դպրոցում: Նա ընտրյալը Գեւորգ (Ժորա) Հակոբյանն էր, որ սերում էր հռչակավոր հայդուկապետ Առաքելի տոհմից: Ոգեշնչեց Անթիկան իր կյանքի ընկերոջը, հաջաբելեց: Եվ Ժորան հյուսեց, ավելի նիրհ, երգի ցավով ու կարոտով արարեց

«Քելե, լաո» երգը, որին վիճակված էր դառնալ համազգային աղոթք, արժանանալ ժողովրդականի ամենամեծ կոչմանն ու պատվին: Գեւորգ (Ժորա) Հակոբյանի «Ծովասարի կակաչները» վիպասմը (արժանացել է Հայաստանի գրողների միության Միխայել Նալբանդյանի անվան մրցանակին) անմահություն պարգեւեց Սասունից եւ Տարոնից բռնագաղթած տարաբախտ պատերին ու մանիկներին: Այդպես Անթիկան եւ Ժորան սեղեցին «Ծովասար» մանկական երգախումբը (հանրապետական եւ միութենական փառատոներում բազմիցս եղել է մրցանակակիր), որ աչխարհով մեկ հանդատիում էր կորած երգի ցավն ու կարոտը:

Նրանց գրած ու մշակած շատ երգեր («Մարաթուկ Աստվածածին», «Սասնա հարսներ», «Գրքելեր») «Քելե, լաոյի» հետ այսօր էլ շարունակում են անցնել շուրթից շուրթ, սրտից սիրտ: Նրանք երգերով վերանենցին ու բորբոքեցին ցավի, կարոտի ու մորմոքի ամենակուլ կրակը: Նրանք երգը հոչակեցին օրենք եւ Աստված՝ արժանի ավանդ ապահովելով 70-80-ականներին ազգային գաղափարախոսության եւ հայ ժողովրդական երգի հրաբաղեղ զարթոնքում:

Անթիկան վաստակաշատ մանկավարժ էր, հիսուն տարի աշխատել է դպրոցում: 2002-ին արժանացել էր ՀՀ նախագահի շնորհակալագրին: Պարգեւը հանձնելիս ՀՀ վարչապետ, երգանկահիշատակ Անդրանիկ Մարգարյանը մեկ խոսք է ասել միայն. «Դում մանկավարժներ, զարդարում եք մեր կյանքը»:

Սակայն այս երգաբուսիչ, սրբազան (բնութագրումը բանաստեղծ Վահագն Դավթյանինն է) օջախի շեղաբուժ կյանքը խաթարվեց անսպասելի. հիսունվեցերորդ տարում կյանքից հեռացավ Գեւորգը: Իսկ այս վրա հասավ ամենասարսափելին՝ դժբախտ պատահարին զոհ գնաց կրտսեր որդին՝ ճնշեսագիտության թեկնածու, սիրելի Հակոբը, որն ընդամենը խանինձներով զարնան մեջ էր: Եվ դժբախտ սասնուհու ալեկոծված սիրտն ընկրկեց ահռելի անամոթի ողբերգության առջեւ...

- Ժորան եւ Հակոբը Սասունում են, նրանց հոգիները հավերներ են դարձել, հաճախ ինքնամոռացության մեջ հարազատներին ասում էր Անթիկան:- Գիշեր-ցերեկ նրանք ինձ կանչում են իրենց մոտ...

Եվ Անթիկա Ոսկանյանը...յոթանասունը չբոլորած, հրաբաղեղ հավերի կանչերին ունկնդիր, գնաց այս արեւ-աչխարհից՝ աչխարհին թողնելով ցավի, մորմոքի, կորուսյալ երգի այրող կարոտի մի խորվահույզ ծով, հայ երգին հավերժական խնկարկության, իսկ հայ ոգուն՝ երկրպագության մի վսեմ պատգամ, մի խնկելի անուն...

ՌՈՒԶԱՆ ԳԱՐԵԳՅԱՆ

ՏԱՊԱՆԳԻ ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ

Քարշի լուսանկարները դարշյալ դրոշմանիշների վրա

Իսմենալուսանկար

Շատ այլ հայորդիների թվում, այս տարին հոբելյանական է նաեւ կանադահայ հայտնի լուսանկարիչ Յուսուֆ Քարշի համար: Լրանում է նրա ծննդյան 100-ամյակը, իսկ մայիսի 21-ին լրացավ միջազգային ճանաչում գտած (1941 թվի) շատիկի վրա նրա Ցերչիլի հանրաճանաչ նկարի տպագրման 68-րդ տարեդարձը: Այդ առթիվ Կանադայի փոստային վարչությունը մայիսի 21-ից երջանառության մեջ է դրել 3 նոր դրոշմանիշ՝ Քարշի կատարած նկարներով: Ներքին օգտագործման համար 52 ցենտ արժողությամբ առաջինը կրում է իր ինքնադիմանկարը, երկրորդը՝ Մ. Նահանգների համար (96 ցենտ արժողությամբ) ներկայացնում է դերասանուհի Օդրի Հեպբոռնին, իսկ երրորդը՝ միջազգային առաքումների համար (1 դոլար 60 ցենտ արժողությամբ), սըր Ուինստոն Ցերչիլի առանց սիգարի, զայրացած դեմքի արտահայտությամբ նկարը, որը տասնամյակներ առաջ արդեն տեղ գտավել էր կանադական դրոշմանիշների վրա:

Ըստ «Արմինյն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթի, 16-ամյա պատանին Կանադայում հայտնվելու առաջին օրը նկարագրելիս ասել է. «Բոլորն ուրախ էին եւ ես կարծես հարբած էի նրանց ուրախությամբ: Դա ինձ համար նոր փորձառություն էր, երազային, գլխապտույտ առաջացնող հեռանկարներով»: Նա չափազանց լավատես էր եւ երջել էր աչխարհով մեկ՝ լուսանկարելով բազմաթիվ ճանաչված խաղաֆական գործիչների, թագավորների, նախագահների, վարչապետերի, գրողների եւ դերասանների: Նրանց թվում են էլիզաբեթ Բ-ն, Կասրոն, Խրուչովը, Բեռնարդ Շոուն եւ Հեմինգուեյը:

Այս շարքից 24-ը տեղ են գտել «Ֆիշասակի թերթիկում», որը նույնպիսի այս առթիվ հրապարակ է հանվել 3 դրոշմանիշերին զուգընթաց: Այս դրոշմանիշերը 150x97 մմ չափսի են, ընդհանուր մեկ թերթի վրա:

Հ. ՇՈՒՇԻԿՅԱՆ

Տաղանդավոր տավղահար Իրիս Թորոսյանը՝ Փարիզի La Sainte Chapelle եկեղեցում

Միջազգային մակարդակի տավղի մենակատար հայ նվագածուները սակավաթիվ են: Այնուհանդերձ անվարան կարող ենք հիշել ուսուցչաթոս, master class-ների դասին պատկանող Սյուզաննա Միլսոնյանի, ինչպես նաեւ երիտասարդ սերնդից Իրիս Թորոսյանի անունները:

Իրիսը զավակն է երաժշտաբեր Սոնա եւ Գեղամ Թորոսյանների. մայրը հանրաճանաչ դաշնակահարուհի, իսկ հայրը՝ Գեղամը, ազգային կարկառուն գործիչ, ՀԲԸՄիության ղեկավարներից եւ Փարիզի Մայր եկեղեցու բազմավաստակ աշխատաթոս, եւ Հայաստանյայց եկեղեցու ծեսի եւ պատմության հմուտ մասնագետ:

Շաբաթ երեկոյան, մայիսի 24-ին La Sainte Chapelle եկեղեցու մեջ «Les Solistes Francais» անվանի կազմակերպության տնօրենի, ջութակահար Paur Brie-ի եւ Իրիս Թորոսյանի մասնակցությամբ տեղի ունեցավ զուգանվագ համերգ: Հարկ է նշել, որ վերոհիշյալ այս կազմակերպությունը համախմբում է եվրոպայի երաժշտանոցների լավագույն մենակատարներին:

Իրիս Թորոսյանի տավիղը ցինջ հնչեցնելով, մոգական երաժշտական մի գործիք է: Խոր զգայնությամբ, հեզությամբ, մելամաղձությամբ, աչքերի տեխնիկայով եւ լարերի հրաբաղեղ կսմիթով ի հայտ է բերում արվեստագետի խառնվածքը:

Իրիս Թորոսյանի երաժշտական նվաճումները եւ այս համերգի հնչակներին ազգային գաղափարախոսության եւ հայ ժողովրդական երգի հրաբաղեղ զարթոնքում:

Անթիկան վաստակաշատ մանկավարժ էր, հիսուն տարի աշխատել է դպրոցում: 2002-ին արժանացել էր ՀՀ նախագահի շնորհակալագրին: Պարգեւը հանձնելիս ՀՀ վարչապետ, երգանկահիշատակ Անդրանիկ Մարգարյանը մեկ խոսք է ասել միայն. «Դում մանկավարժներ, զարդարում եք մեր կյանքը»:

Սակայն այս երգաբուսիչ, սրբազան (բնութագրումը բանաստեղծ Վահագն Դավթյանինն է) օջախի շեղաբուժ կյանքը խաթարվեց անսպասելի. հիսունվեցերորդ տարում կյանքից հեռացավ Գեւորգը: Իսկ այս վրա հասավ ամենասարսափելին՝ դժբախտ պատահարին զոհ գնաց կրտսեր որդին՝ ճնշեսագիտության թեկնածու, սիրելի Հակոբը, որն ընդամենը խանինձներով զարնան մեջ էր: Եվ դժբախտ սասնուհու ալեկոծված սիրտն ընկրկեց ահռելի անամոթի ողբերգության առջեւ...

- Ժորան եւ Հակոբը Սասունում են, նրանց հոգիները հավերներ են դարձել, հաճախ ինքնամոռացության մեջ հարազատներին ասում էր Անթիկան:- Գիշեր-ցերեկ նրանք ինձ կանչում են իրենց մոտ...

Եվ Անթիկա Ոսկանյանը...յոթանասունը չբոլորած, հրաբաղեղ հավերի կանչերին ունկնդիր, գնաց այս արեւ-աչխարհից՝ աչխարհին թողնելով ցավի, մորմոքի, կորուսյալ երգի այրող կարոտի մի խորվահույզ ծով, հայ երգին հավերժական խնկարկության, իսկ հայ ոգուն՝ երկրպագության մի վսեմ պատգամ, մի խնկելի անուն...

ՌՈՒԶԱՆ ԳԱՐԵԳՅԱՆ

Հայ երեխաները՝ մրցանակակիր

ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի կազմակերպած երեխաների նկարչության միջազգային մրցույթին այս տարի 90 երկրից 15 550 նկարներ են սացվել: Հայաստանից մասնակցել է 67 երեխա: Եվրոպայի տարածաշրջանի 120 հաղթողների թվում են 12-ամյա Շանթ Հակոբյանն ու մեծամյա Ռուբինյանը Հայաստանից: Իսկ 10-ամյա Մարիա Քասաբյանը՝ Նիգերիայից, արժանացել է Աֆրիկայի տարածաշրջանի առաջին մրցանակին: Մրցույթի հաղթողը 14-ամյա Գլորիա Թունգն է Հոնկոնգից:

Առաջին ուղեգիրը պորտուգալացիներին

Եվրո-2008-ի մասնակիցներից առաջինը Պորտուգալիայի հավաքականին հաջողվեց ժամկետից շուտ հաջող փուլի ուղեգիր նվաճել: Իսկ Շվեյցարիայի ընտրանին առաջինն է, որ դուրս մնաց հեռագա պայքարից:

Պորտուգալացիները չեխերի հետ խաղում էլ այլի ընկան իրենց վարպետությամբ, ինչն իր արահայությունը գտավ հանդիպման հաշվում (3-1): Առաջնությունում գոլերի թիվը բացեց Քրիսթիանու Ռոնալդուն, մյուս երկուսն իրենց օգտին գրանցեցին Դելկոն եւ Կուարեժման: Չեխերից միակ գոլի հեղինակը Սյոնկոն էր: Ի դեմ, Եվրոպայի առաջնություններում պորտուգալացիներին միայն չորրորդ փորձից հաջողվեց պարտության մատնել չեխերին: 1975-ին թիմերի միջեւ կայացած ընտրական հանդիպումներից առաջինում չեխերը Պրահայում 5-0 հաշվով ջախջախել էին պորտուգալացիներին, իսկ հյուրընկալվելիս խաղն ավարտել էին ոչ-ոքի (1-1): 1996-ի Եվրոպայի առաջնության խառնդ եզրափակիչ խաղն էլ չեխերը շահել էին 1-0 հաշվով:

Լուիս Ֆելիպե Սկոլարի (Պորտուգալիա)-Շատ հույս եմ սանձրվս, որ ժամկետից շուտ կատարեցին առաջադրանքը: Նախկինում մենք հաճախ էինք մեզ համար հիմնախնդիրներ ստեղծում: Այժմ նոր թիմ է ձեւավորվել, որը ժամկետից շուտ նվաճեց հաջող փուլի ուղեգիրը: Հաճելի է, որ ֆուտբոլիստները լավագույն մարզավիճակում են: Հաջող խաղում բնավ էլ մեծարիր չենք պատասխանվել: Առաջնությունում մեր նպատակն է հաղթել յուրաքանչյուր խաղում:

Կարել Բրուկներ (Չեխիա)-Կարծում եմ բավական ժամանակ լավ էինք խաղում, սակայն ի վերջո զիջեցինք շատ տաղանդավոր հավաքականին: Առաջին խաղակեսում ապացուցեցինք, որ կարող ենք լավ խաղալ թե պաշտպանությունում, թե հարձակման գծում: Առաջին խաղի համեմատ ավելի շատ գոլային պահեր ստեղծեցինք: Պլաշիլն ու Բարոշը շատ օգտակար խաղացին: Խոստանում եմ, որ վերջին հանդիպմանը կներկայանանք կազմ ու պատրաստ, մարտական տրամադրվածությամբ:

Թուրքիա-Շվեյցարիա խաղում բոլոր 3 գոլերն էլ խփեցին ազգությամբ թուրք ֆուտբոլիստները: Շվեյցարացիներից հաշիվը բացեց Հական Յակինը, սակայն թուրքերը 2-ր խաղակեսում, ավելացված ժամանակում կորզեցին հաղթանակը: Այլի ընկան Սեմիխ Շենթյուրկն ու Արդա Թուրանը: Այժմ 2-ր ուղեգրի բախտը կվճռվի Թուրքիա-Չեխիա մրցախաղում:

«A» խումբ

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Պորտուգալիա	2	2	0	0	5-1	6
2. Թուրքիա	2	1	0	1	2-3	3
3. Չեխիա	2	1	0	1	2-3	3
4. Շվեյցարիա	2	0	0	2	1-3	0

Վիճակագրությունն իտալացիների օգտին է

Այսօր 2-ր տուրի մրցախաղերը կանցկացնեն «C» խմբի թիմերը: Աբխազիի չեմպիոն իտալացիների համար ռումինացիների հետ հանդիպումը վճռորոշ նշանակություն ունի: Պարտության դեպքում Եվրոպայի առաջնությունների պատմության մեջ առաջին անգամ գործող ափսարիի չեմպիոնը չի հաղթահարի առաջին փուլի արգելքը: Դա իտալացիների համար իսկապես մեծ ողբերգություն կլինի:

Ճիշտ է, վիճակագրությունն իտալացիների օգտին է: Ռումինացիների հետ անցկացրած 14 հանդիպումներից 10-ում նրանք հաղթել են, 2 խաղ ավարտել են ոչ-ոքի եւ միայն 2-ում են պարտվել: Գոլակների տարբերությունն է 24-10: Բուքմեյքերներն էլ նախապատվությունը տալիս են իտալացիներին, որոնց հաղթելու հավանականությունը գնահատվում է 1,65 գործակցով: Մինչդեռ ռումինացիների հաղթանակի գործակիցը 4,75 է, ոչ-ոքինը՝ 3,38:

Իտալիայի հավաքականը եվրոպայի չեմպիոնի տիտղոսը նվաճել է 40 տարի առաջ՝ եզրափակիչում հաղթելով հարավսլավացիներին: 2000-ին էլ իտալացիները դարձել են արդեն մրցանակակիրներ՝ զիջելով ֆրանսիացիներին: Իսկ ահա երկու անգամ Ռուսաստանի ընտրանուն չի հաջողվել տալիայի ընտրանուն չի հաջողվել հաղթահարել առաջին փուլի արգելքը: Ռումինացիների լավագույն արդյունքը 2000-ին խառնդ եզրափակիչ մտնելն է, որտեղ նրանք զիջել են իտալացիներին:

Հոլանդիա-Ֆրանսիա խաղում բուքմեյքերները որոշ առավելություն են տալիս հոլանդացիներին (2,55): Ֆրանսիացիների հաղթանակը գնահատվում է 2,70 գործակցով, իսկ ոչ-ոքհաավում է 2,85: Անձնական հանդիպումներից՝ 2,85: Անձնական հանդիպումներում էլ հոլանդացիների առավելությունը մրցակցի նկատմամբ չնչին է (+9=4-8, 47-34): Ֆրանսիացիների համար եւս պարտությունը կարող է ճակատագրական լինել: Իսկ Հոլանդիայի հավաքականին նույնիսկ ոչ-ոքին (եթե ռումինացիները հաղթեն իտալացիներին) հաջող փուլի ուղեգիր կարող է պարգեւել:

Եվրոպայի առաջնություններում մրցակիցներն առաջին անգամ հանդիպել են 1996-ին: Քառորդ եզրափակիչ այդ խաղում դարձյալ մնացին անառիկ, իսկ հաղթողը որոշվեց 11 մ հարվածներով, որում հաջողությունն ուղեկցեց ֆրանսիացիներին: Չորս տարի անց հոլանդացիները ռեւանշի հասան (3-2) խմբային մրցաշարի խաղում: Չնայած պարտությանը, Ֆրանսիայի հավաքականն այդ տարի 2-ր անգամ նվաճեց եվրոպայի չեմպիոնի տիտղոսը: Իսկ առաջին հաջողությունը «եռագույնները» գրանցել էին 1984-ին: «Նարնջագույններին» էլ 1988-ին է հաջողվել ուժերգույնը ճանաչվել եվրոպայում:

Սկոլարին կգլխավորի «Չելսին»

Չեխերի նկատմամբ պորտուգալացիների հաղթանակից մի քանի ժամ հետո հայտնի դարձավ, որ Պորտուգալիայի հավաքականի գլխավոր մարզիչ Լուիս Ֆելիպե Սկոլարին հուլիսի 1-ից սանձնելու է Լոնդոնի «Չելսիի» դեկը: Այս լուրը բնավ էլ անակնկալ չէր, քանի որ բրազիլացի մասնագետը «Չելսիի» գլխավոր մարզիչ պատոնի հիմնական հավակնորդներից մեկն էր:

Սկոլարին դեռեւս եվրոպայի առաջնությունից առաջ հայտարարել էր, որ այն կլինի իր համար վերջին մրցաշարը պորտուգալացիների գլխավոր մարզչի պատոնում, որում նա աշխատում է արդեն 5 տարի: «Չելսիի» ինստիտուցիոնալ պատոնական կայքէջում Սկոլարիին հետեւյալ բնորոշումն է տվել. «Ֆելիպեն հիանալի հաղթանակներով օժտված անձնավորություն է: Նա համաշխարհային ֆուտբոլի հոյակապ մարզիկներից մեկն է, լավագույն արդյունքն է ցույց տվել իր գլխավորած թիմերի հետ: Նա լավ է աշխատում այն թիմերի հետ, որոնք առանձնապես տաղանդավոր ֆուտբոլիստներ չունեն»:

Սկոլարիի գլխավոր նվաճումն իր հարկե Բրազիլիայի հավաքականին 2002-ի աշխարհի չեմպիոնի տիտղոսին հասցնելն է: Սկզբնական մասին հասցնելն է: Սկզբնական մասին հասցնելն է: Սկզբնական մաս

ԱԶԳ

Օրվա հետքերով

Հայաստանցիներն Իրան մուտքի վիզա կստանան սահմանակետում

Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանությունը հաղորդագրություն է տարածել՝ հիշեցնելով, որ ընթացիկ տարվա մարտի 21-ից Նորդուզ հայ-իրանական սահմանային կետում հաղորդիներին տրվում են Իրանի մուտքի արտոնագրեր: 3 օր ժամկետությամբ արտոնագրի արժեքն է 20 եվրո, 10-օրյա արտոնագիրը՝ 30, իսկ 21-օրյա ժամկետությամբ արտոնագրերը՝ 50 եվրո:

Հաղորդվում է նաեւ, որ արտոնագրերի տրամադրման գրասենյակն աշխատում է ամեն օր, բացի հինգշաբթի եւ ուրբաթ օրերից, ժամը 8-ից մինչեւ 17-ը: Արտոնագրեր ստանալու համար անհրաժեշտ են՝ անձնագիր, 2 նկար, հարցաշարի լրացում արտոնագրի տրամադրման համար, ինչպես նաեւ արտոնագրի գումարի վճարում «Մելի» բանկի Նորդուզ մասնաճյուղում:

Կրթաթոշակի վկայագրեր՝ DAAD-ի կրթաթոշակակիրներին

2008-ի հունիսի 14-ին ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան տիկին Անդրեա Վիկսորինը կրթաթոշակի վկայագրեր կհանձնի DAAD-ի 60 կրթաթոշակակիրների: Կրթաթոշակակիրները ընտրության բարդ փուլեր են անցել եւ ստացել DAAD- ի կրթաթոշակներ 500.000 եվրո ընդհանուր արժողությամբ:

DAAD-ը գերմանական բուհերի համընդհանուր կառույց է եւ միջազգային ակադեմիական փոխանակմանն օժանդակող ամենամեծ կազմակերպությունն աշխարհում: Այն տարեկան օժանդակում է գերմանացի եւ օտարերկրյա ավելի քան 55.000 ուսանողների, բուհավարտների եւ գիտնականների 200-ից ավելի ծրագրերում: Հայաստանում գործում է DAAD-ի տեղանավարտների սեր համագործակցության ցանց՝ բաղկացած ավելի քան 400 անձանցից, որոնք սովորել կամ հետազոտություններ են անցկացրել Գերմանիայում:

Ս. Մ.

Կենտրոնական բանկի նորացված կայքէջը

Հայաստանի Կենտրոնական բանկի նորացված կայքէջը երեկ ներկայացրեց ԿԲ մամուլի քարտուղար **Զարուհի Բարսեղյանը**: Նա նշեց, որ կայքը մի քանի տարի գործում է եւ թարմացման կարիք ուներ: Այդ նպատակով հայտարարվել էր մրցույթ, որը շահել եւ կայքի նորացումը կատարել էր «Սոֆիս» ընկերությունը: Նորացված կայքը սկսել է գործել մայիսի 30-ից: Նրանում նախկին 15-ի փոխարեն ստեղծվել են ավելի փոքր թվով բաժիններ, որոնք բաժանվում են ենթաբաժինների, ինչն ավելի հեշտացնում է փնտրվող նյութը գտնելը: Կայքն առայժմ գործում է երկու լեզուներով՝ հայերեն եւ անգլերեն: Հետագայում կլինի նաեւ ռուսերեն տարբերակը: Կայքի տեղեկատվությունը պարբերաբար նորացնելու են հատուկ այդ գործով զբաղվելու համար աշխատանքի ընդունված մասնագետները:

Ս. Մ.

Hyundai EURO FanTastic

Հյունդայի Մոթոր Քոմփանին
Euro-2008-ի
գլխավոր հովանավոր

Hyundai ընկերության Հայաստանում պաշտոնական միակ ներկայացուցիչ
«Մագաս Ինվեստ» ՓԲԸ-ն
Եվրոպայի սպորտային ամենաթեժ իրադարձության առթիվ
Հայաստանի ֆուտբոլասերներին առաջարկում է **3% զեղչ** Hyundai մակնիշի
բոլոր ավտոմեքենաների համար + ***հետաքրքրական ու գրավիչ նվերներ***

Սա է իսկական առիթը

Մասնագիտություն, որն անհրաժեշտ է ամենուր
ԲԱՐՁՐԱԿԱՐԳ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Ավարտելով **եռամսյա դասընթացը** դուք կստանաք.
- հաշվապահությունը վարելու գիտելիքներ եւ կիրառական հմտություններ,
- հաշվապահական եւ հարկային հաշվառումը ինքնուրույն վարելու փորձ,
- մեկամսյա աշխատանքային պրակտիկա եւ առաջին աշխատանքի փորձ,
- աջակցություն աշխատանքի տեղավորման հարցում

Ավարտողներին տրվում է պետական նմուշի հավաստագիր:

«ԷԿՈՆՈՄԻԿԱ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ» կենտրոն

«ԷԿՈՆՈՄԻԿԱ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ» ԿԵՆՏՐՈՆ
Գարդաշյան 24/1,
ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Գրադարանի 6-րդ հարկ, 54-24-81

ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 12.06.2008 թ.

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Միջին փոխարժեք
USD	1	ԱՄՆ դոլար	307.22
EUR	1	ԵՎՐՈ	474.44
RUR	1	Ռուս. ռուբլի	12.94
GEL	1	Վրաց. լարի	214.99

www.azg.am

«Անի Տուր» պատմամշակութային տուրիստական գործակալությունը կազմակերպում է 7-ից 10-օրյա բարձրակարգ շրջագայություններ հնագույն պատմական հայաստանի նվիրված ամենիկահաչ մեծանուն գլուխ Վիլյամ Սարոյանի ծննդյան 100-ամյա հոբելյանին:

Շրջագայության մասնակիցները բացի մեծ գրողի ծննդավայր **Բիթլիսից**, կայցելեն նաեւ **Կարս, Անի, Իգդիր, Բայազետ, Վան, Մուշ, Խնուս, Էրզրում, Արդահան** քաղաքները:

Ուզում եք ՇՈՒ ընտրված եզակի հնաբարոյությունից եւ մասնակիցը դարձեք մեր այս հիշարժան ուխտագնացությունին:

Մանրամասների համար կարող եք այցելել մեզ հետեւյալ հասցեով՝
Երեւան,
Բարեգործ 28, սենյակ 20
Հեռ. (091) 203 206,
(094) 203 206.

DigiTec բիզնես ֆորում

Հունիսի 26-ին եւ 27-ին «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում ԻՆֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը (ԻՏՄՄ) նախաձեռնել է DigiTec Business ֆորումը: DigiTec ցուցահանդեսն իրականացվում է 2005 թվականից, եւ ինչպես նշում է ԻՏՄՄ նշորեն Կարեն Վարդանյանը, դեռեւս 2005-ին նպատակ ունեին այն դարձնել տարածաշրջանային խոշորագույն ցուցահանդես: 2007-ին DigiTec ցուցահանդեսի ընթացքում ամերիկյան խորհրդատվական ընկերության անցկացրած հարցումները ցույց տվեցին, որ ցուցահանդեսի այցելուների մոտ 20 տոկոսը ձեռնարկությունների ղեկավարներ են, ովքեր հետաքրքրված են համակարգչային, ծրագրային, հեռահաղորդակցական եւ այլ տիպի լուծումներով՝ սեփական ձեռնարկությունում կիրառելու համար: Բացի այդ, Համաշխարհային ֆորումի հետազոտությունները ցույց են տվել, որ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման մակարդակով Հայաստանն աշխարհում գտնվում է 106-դ տեղում՝ ամեն տարի իր դիրքերը զիջելով մոտ 10 հորիզոնականով եւ իրենից հետո թողնելով 10-15 աֆրիկյան պետություններ: Այսպիսով՝ մի կողմից կա հայաստանյան ձեռնարկատերերի պահանջարկը, մյուս կողմից՝ անկախ փորձագետների գնահատականը: Բացի այդ, Հայաստանում գործում են ծանաչում վայելող ընկերություններ, որոնք մրցունակ արտադրանք են տալիս եւ՝ համաշխարհային, եւ՝ տեղական շուկաների համար: Այս ամենից հետեւություն անելով՝ ԻՆֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը որոշեց կազմակերպել հատուկ բիզնես ֆորում, որը բաց կլինի ձեռնարկությունների ղեկավարների, ՏՏ գծով պատասխանատուների, հաշվապահների, ֆինանսական տնօրենների համար: Այսինքն՝ այն մարդկանց համար, ովքեր ուղղակիորեն հետաքրքրված են, որպեսզի կիրառելով տեղեկատվական տեխնոլոգիաների լուծումները՝ բարձրացնեն իրենց ձեռնարկության աշխատանքի արդյունավետությունը եւ մրցունակությունը:

Ինչպես տեղեկացնում է Կարեն Վարդանյանը, միջոցառումը մեծ արձագանք ստացավ. DigiTec բիզնես ֆորումին իր աջակցությունը հայտնեց ՀՀ կառավարությունը: Այն անցկացվում է ՀՀ վարչապետի բարձր հովանու ներքո: Ֆորումին աջակցում են նաեւ Հայաստանի գործատուների հանրապետական միությունը, Հայաստանի բանկերի միությունը: Աշխարհահռչակ «Մայքրոսոֆթ» ընկերությունը նույնպես ցանկություն է հայտնել DigiTec Business համաժողովի շրջանակներում անցկացնել նորարարական ֆորում, որի նպատակն է ցույց տալ, թե ինչպես պետք է օգտագործել տեխնոլոգիական լուծումները:

Միջոցառման ընթացքում անցկացվելու են գործնական-ցուցադրումներ, կլոր սեղաններ, թրեյնինգներ, բացի այդ, կլինեն բանակցային տարածքներ, որտեղ մասնակիցները կարող են ծանոթանալ կոնկրետ ընկերության առաջարկած լուծումներին եւ հնարավորություն կունենան բանակցելու համապատասխան կազմակերպությունների հետ: Ֆորումի ընթացքում լինելու է նաեւ խորհրդատուների սրահ, որտեղ մասնակիցները կարող են ստանալ անհատական խորհրդատվություն բիզնեսում տեղեկատվական եւ հեռահաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներդրման թեմաներով, մասնավորապես ծրագրային, տեխնիկական եւ ցանցային աջակցման լուծումների, համախմբումների եւ անձնակազմի կառավարման, պահեստի եւ վաճառքների կազմակերպման, ֆինանսական կառավարման, հաշվապահության, ինտերնետ մարքեթինգի, վեբ էջերի եւ այլ տեխնոլոգիաների վերաբերյալ:

Բիզնես համաժողովին մասնակցելու իրենց համաձայնությունն են հայտնել թե՛ տեղական, թե՛ արտասահմանյան հայտնի ընկերություններ, մասնավորապես՝ Intel, IBM, HP ընկերություններն իրենց գործնական ցուցադրություններն են կազմակերպելու ֆորումի ընթացքում: Ներկա կլինեն նաեւ հայաստանյան շուկայում հայտնի ArmSoft-ը, Smart Systems-ը, Unicomp-ը եւ «Բի լայնը»: Ընդհանուր առմամբ ակնկալվում է բիզնես ոլորտի շուրջ 1500 ներկայացուցիչների մասնակցություն: Հավելենք, որ բիզնես ֆորումին մասնակցությունը տոմսերով է. մեկ օրվա վարձը 5000 դրամ է, երկու օրվանը՝ 8000 դրամ: Ընդ որում, այդ գումարի մեջ մտնում են մի շարք ծառայություններ. մասնակիցներին տրվում են մեթոդական նյութեր, անվճար անհատական մասնագիտական խորհրդատվություն բիզնեսում ՏՀՏ ներդրման տարբեր ուղղություններին վերաբերյալ, ինչպես նաեւ սեմինարներին եւ թրեյնինգներին մասնակցելու հնարավորություն:

Եվ այսպես՝ հունիսի 26-27-ը՝ երկու օր շարունակ, 25 ընկերություններ եւ շուրջ 40 զեկուցողներ սեմինարների միջոցով կներկայացնեն առօրյա բիզնեսի համար նախատեսված ՏՀՏ նորագույն լուծումները:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահության ՀՀ ոստիկանության պետական տեսչության կողմից ՀՀ քրեական օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն ծանուցվում է ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքի հողի սեփականատեր Իսահակյանների իրավահաջորդներին Մկրտչիկ Աթեքսանի՝ որոշման նպատակով սահմանվող քաղաքացիական օբյեկտից 2.0 լայն քարե ճանապարհի նախագծի:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ քաղաքացիական պաշտպանության գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-ոդ տուն, 5-ոդ հարկ, 541 սենյակ):

Հասարակությունից կողմից փաստաթղթի նախնական տարբերակի քննարկումը տեղի կունենա 2008 թ. հունիսի 19-ին, ժամը 16-ին, Կառավարական 3-ոդ տուն, 5-ոդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ քաղաքացիական պաշտպանության գործակալություն

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԵԳԱՇԱՐԵԼ՝ 58-29-60

Լուսանկարները՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Ասեփեան: Տիրաժ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 12.06.2008, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արաքսյան 2: